

ԱՐՄԱՆ ԿՈԹԻԿՅԱՆ

ԽՈՒԹԵՅԻ ՀՈՎՆԱՆ

ՀԱՅԴԵՏԿՐԱՏ



891.99
4-63

ԱՐՄԱՆ ԿՈԹԻԿՅԱՆ

ԱՏՈՒԳԱԼԱՅ Է 1961 Ք.

ԽՈՒԹԵՅԻ ՆՈՎԱՆԱՆ



A 28244 8807



1946

ՀԱՅԿԱՆԱԳՐԱԴԱՐԱՆ

Պատ. խմբագիր՝ ՀՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ХУТСКИЙ ОБНАН

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1946

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
1892



Մ Ո Ւ Տ Ք

ԱԿՈՍՆԵՐՈՒՄ

Կեսօր է արդեն և ես կրկին
Արևոտ ճամբով իջնում եմ դաշտ.
Խնդովյամբ լի է իմ ջերմ հոգին
Նվ սիրտս պալծառ երգերով դաշն...

Յանում եմ ահա ես լիաբուռ
Ակոսներում լալն, անեզրական,
Սերմերը խոսքիս որպես մաքուր
Յորյանը ազնիվ հայրենական...

Կդառնա՞ արդյոք հերկս բերրի,
Նվ հունձքում վաղվա կտեսնե՞մ ես
Վաստակիս փալլը,—բերքս բարի
Օրերում դալիք արեակեզ...:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԳԵՂՈՒՆՆԵՐ

ՏԱՂԱԿԻՐՎԱՆՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

1.

Երկիր իմ հիշում եմ անցյալդ դառնալետ,
Ո՛ր ալն անցյալը, որ տանում է մինչև Անի,
Մինչև Աշտիշատ, մինչև Տիգրանակերտ,
Այլ ալն՝ որին վկան եմ ես կենդանի:
Հեռավո՛ր, հեռավո՛ր անցյալիդ մասին
Վկա՛ել է պատմության գիրը երկաթյա,
Ի՛նչ կարող է հավելուլ մի տողը սին
Փառքերիդ անթառամ դափնիների վրա...

2.

Ես ապրեցի երեկը քո անդառնալի,
Երեկդ տխուր և՛ դառնաթախիժ,
Եվ գիտեմ թե ինչպես հուշիդ մոմը հոգեվարք
Հեծկտալեն դողում էր շիջման վախից:
Եվ եթե ուզում եմ ես վերհիշել կրկին
Ցավատանջ երեկը քո կրկնակի հուսահատ,
Այդ նրա համար լոկ որպեսզի իմ հոգին
Քո անունից լինի կրկնակի երախտապարտ
Փրկարար ալն արեւին, որ կոչվեց Սովետ,
Որ սրբեց արցունքը քո աչքերի,
Որ քեզ պարգևեց ներկան երջանկավետ
Զթողեց որ մնաս հյուծյալ և գերի.
Եվ դարձյալ այդ լոկ նրա համար
Որպեսզի հավատքդ լինի առավել անսասան,

Եվ հույսիդ ջահը հավերժորեն անմար՝
Դեպի արփենաշող և պայծառ ապագան...

3.

Հիշում եմ խոշտանգված դեմքդ վիրավոր,
Երբ քեզ անվանում էին «Թշվառ ազգ»
Եվ երբ ճակատիդ որպես դատավճիռ մի նոր
Մշխել էին մի սգավոր մահազդ...

Երբ հողդ սրբազան տրորվում էր սրտիդ հետ
Բնակալների կրունկների տակ անխնա,
Եվ երբ մորմոքում էր հոգիդ դառնազետ,
Ազնվատենչ հոգիդ բաղմհաղարամյա...

Երբ ճակատագիրը քո եղբրական
Վաճառքի էին հանել ի խնդիր հացի,
Եվ երբ յուրաքանչյուր «քաղաքակիրթ» եվրոպացի
Այսինքն յուրաքանչյուր հոգով բարբարոս
Քեզ դարձրել էր լորձունք ճառի և կամ
Մի սրբազան մոնսենյորի պատարագի քարոզ...

4.

Երբ «վեհաժողովներն» սեղաններին պերճ
Դու դարձել էիր աղանդեր և սուրճ արևելյան
Մինչ խրճիթներում քո ծխում էր անվերջ
Սրտամրմուռ վիշտդ՝ որպես զալյան...
Եվ երբ քո խորթ զավակներն անհարազատ
Բաղդդ վերածած լպիրշ թղթախաղի
Հեգնում էին վիշտդ, արտասուքդ աղի,
Եվ հորանջելով երազում «Հայաստան ազատ»...
Խեղճ, խեղճ իմ երկիր, նշավակ և զոհ,
Երկիր Հայկի, Մեծն Տիգրանի և Տրդատի,
Դաշունում էին սիրտդ,—օ, նզո՛վք, նզո՛վք,
Դաշունողներդ չեն մնա սահայն առանց դատի...

5.

Եվ այսպես օրերդ անցնում էին տարտամ
Մոգապատ և ցուրտ մշուշում թանձրաբող,

Եվ հրճվում էին ոսոխներդ ամեն անգամ,
 Ոսոխներդ՝ դարավոր լուսդ կեղեքող:
 Եվ քո դաշտերում սգավոր և լուռ
 Սուրհմամ արածում էին Բագրատունյաց
 Նժույգների երամակներն կուշտ ու կուռ՝
 Դաժան սով էր տիրում և քաղց...

6.

Այլ սակայն վերջապես մի առավոտ,
 — Եվ այդ առավոտը թող օրհնյալ լինի —
 Մշատության վառ արեգակը լուսահորդ
 Ճառագեց կերպարանքովը մեծ կենինի:
 Նա տարածվեց դաշտերիդ՝ ուր սով էր,
 Գյուղերիդ, խրճիթներիդ վրա գետնաքարշ,
 Եվ անունը նրա ազատարար Սովետ
 Արձագանքեց որպես հաղթական մի մարշ...
 Եվ ինչպես ահեղ փոթորիկներից հետո
 Վարարում են գետերը մոլուցքով անսանձ՝
 Այդպես վարարեց վրեժի հսկա գետը,
 Կատաղած ամբոխը տառապող մարդկանց:
 Շղթայված ցասումը դարձել էր դաշույն
 Ընդերքից դուրս ելած մարտիկներիդ ձեռքում,
 Ոռնում էր թշնամին ինչպես գազազած շուն
 Որ իր սատակումի օրհասն է զգում...

7.

Եվ Ստալինյան բոցավառ դրոշի տակ
 Կռվում էին որդիքդ արիաբար և գունդ առ գունդ,
 Կռվում էր հնավուրց — դաշտավայրը Շիրակի,
 Կռվում էր Ղարաբաղը — Լեռնաշխարհը նեմրուդ:
 Կռվում էին հանուն լույսի և ազատության
 Բոլոր նրանք՝ ում սրտներում եռում էր բորբ
 Արդար ատելության շիկացած կաթսան
 Եվ վրեժի կարմիր ծովը ցասումնահորդ:

Եվ վրեժի ցուլը ամենի մոնչում էր
Ծամեւով ատամների տակ օղակներն իր շղթայի,
Կռիվ էր անհավասար՝ և շափ, սահման չունեի
Ազատատենչ ոգին յուրաքանչյուր հայի...

8.

Այն օրից անցել է քանի քանի տարի
Եվ շղթադ ստրկութեան փշրվել է իսպառ,
Դժվար էին տարիները հաղթանակի և պայքարի
Սակայն ստրկութիւնն ավելի էր դժվար:
Հիշի՛ր, երկիր իմ, անցյալը քո դառնահեծ
Նրբ անդունդի եզրին մտորում էիր անհույս,
Հիշի՛ր, որ կորստյան ահեղ ժամիդ քեզ փրկեց
Սովետական փրկարար բազուկն արեւալույս...

9.

Երկի՛ր իմ նորոգ, երկի՛ր իմ լուսապայծառ,
Թշնամին մի օր փորձեց սև թաթն իր երկարել
Կամենալով մարել լույսը քո արեւալու
Որին սպասել ես դու այնքա՞ն դարեւր...
Նա փորձեց ավերել նորակառույց շենքերը քո,
Ավերել տաճարներդ գեղաքանդակ և վես,
Որպեսզի իր շնական դարշապարի ներքո
Հավետ մնաս ստրուկ և նորից հեծես:

10.

Այլ սակայն թշնամու երազը խեղացնոր
Երազ էլ մնաց անհույս և անպսակ
Եվ սովետական արդար թուրը հզոր
Ջախջախեց ժանտ թշնամուն Բեռլինի պատերի տակ...
Երկի՛ր իմ հաղթական, երկիր իմ լուսապայծառ
Դու կապրես հավետ անսասան ու միշտ անպարտ,
Անսասան՝ ինչպես մեր լեռները գոռ ու հպարտ,
Ինչպես դարավոր Մասիսը մեր ձյունափառ:

1.

Սրենն ընկել է կապույտ ջրերիդ
 Վառվում ես նորից զմբուխտի նրման,
 Տեգերն արևի խաղում են ջիրիդ
 Բաց դաշտիդ վրա, իմ անուշ Սևա՛ն...

Քարերն հատակիդ համրում եմ ահա,
 Վշտերն եմ համրում հոգուդ մայրական.
 Դարերն անցյալի սրտիդ բյուրեղյա
 Քարեր են նետել, իմ անուշ Սևա՛ն...

Քայց դու լուել ես և վիշտդ անհուն
 Թաղած խորքիդ մեջ՝ հույսերով վառման
 Երազել ես միշտ երջանիկ հեռուն,
 Օրերը գալիք, իմ անուշ Սևա՛ն...

Կանգնել ես ահա հերոսի պես հուր
 Ժպիտով պայծառ, փառքով աննրման,
 Շողում են մեջքիդ հազար ոսկե թուր,
 Իմ անմեռ երազ, իմ անուշ Սևա՛ն...

Օտար հողում անօթեան
Քանի՜ տարի ես ապրեցի
Քո կարոտով, մա՛յր իմ Սեան...

Ու մի ամառ եկա այցի,
Զրերիդ մեջ մաքուր ու զով
Հոգնած դմբս ես լվացի...

Ասի՜ եկա, հայրենի՜ ծով,
Ծով կարոտդ տանջել է ինձ,
Գիրկդ առ ինձ սիրագործով...

Քո որդին եմ արշունակից,
Հազարների սերն եմ բերել
Հեռու-հեռու երկրներից...

Ու փարվեցինք մենք իրարու
Արտասվեցինք ու ժպտացինք
Կարոտածներ որպես երկու...

Հ Ր Ա Ա Պ Ա Ն

Սեգ լեռների խրոխտ սրտից թե առած
 Քար ու մացառ համբուրելով ես գալիս...
 Հալրենական հողի ուժը կուտակած՝
 Արևաբաշ նժույգներով ես գալիս...
 Քաջ Վարդանի նման աննկնդ ուղմավար,
 Ճամբաներեդ զորք հավաքում ու գալիս...
 Մեջքիդ ցասում, սրտումդ սխ բոցավառ՝
 Ազազակող վրրեժի պես ես գալիս...
 Կովի մեկնող մարտիկների պես հազար՝
 Ծափ ու ծիծաղ, ծնծղաներով ես գալիս...
 Ահա կանգնել քո եզերքին անբարբառ,
 Լսում եմ ես շառաչիդ մեջ շանթագող,
 Իմ շեփորի երգը ուրախ ու պաշտառ
 Արձագանքող հեռուները հեռավոր...:

20—7—42 թ.

Ա Ր Ե Վ Ա Գ Ա Լ

Առավոտ, առավոտ լուսո
 Բացվել է հոգու լեռներում,
 Նրա հորդ, դժառատ լույսով
 Տեսնում եմ գալիքը հեռուն.
 Դարերի ճամբից հեռավոր
 Անցյալն է գալիս դեպի ինձ,
 Զարկերից, մարտերից՝ բոսոր
 Հաղթական և արյունալից:

Պատմության քարվանհն է գալիս
 Պարտության, հաղթության բեռով,
 Գեմքերը նախնի պապերիս
 Տեսնում եմ ե՛կ՝ վե՛հ ե՛կ խրոտվ.
 Գրքերի դեզերի կողքին
 Դպիրներ նստած քրտնաթոր
 Բերում են փառքերը մեր հին
 Անսպառ դանձերը բոլոր:

Թերթում եմ մազազաթները
 Դուրերից խունացած, դժգուշն,
 Ռե նորից հայրենի սերը
 Վառվում է իմ սրտի խորքում.
 Կարգում եմ տաղերը անգին,
 Տողերը մեծ հորենացու,
 Տեսնում եմ նրա լույս հողին
 Էջերում՝ իմաստով օծուն...

Օ՛, խոսուն տողեր թռչնագիր,
Դուք հոսուն վտակներ արծաթ...
Դպիրներ տրտում, վշտակիր,
Դպրության հայրեր խանդակաթ...
Ցնցուղեք ձեր լույսը բարի
Իմ հոգուն որպես արեգակ...
Երգերիս ծիլը երկարի
Ուռճանա՛ ձեր շողերի տակ...

Առավոտ, առավոտ լուսո
Բացվել է հոգուս լեռներում
Նրա հորդ, գթառատ լույսով
Տեսնում եմ գալիքը հեռուն.
Արեգի շառալյների պես
Շռալ է դարձել իմ հոգին,
Բացել եմ սիրտը իմ հրկեղ
Ուզում եմ բաշխել ամենքին...

Ն Ա Վ Ա Ս Ա Ր Դ Յ Ա Ն

Ծագիկներով պճնել են մեհյանն համակ զեղակերտ
 Ու մրգերով ողողել կուռքի սեղանը մարմար,
 Աստվածների նմանող քրմապետներ հերթ ի հերթ
 Խունկ են լեցնում ու կնդրով ատրուշանի մեջ անմարտ:

Ամանորի տոնն է այս, նվիրական ու շքեղ,
 — Արևագի՛ր թվական մեր հեթանոս հին նախնայաց —
 Ահա արքան Արտաշես, աշխարհակալն այն ահեղ
 Ցուլ է զոհում մեծ կուռքին՝ հաղթանակի որպես վարձ:

Եվ Ալանաց դուտորը հեզ, դշխոն հայոց՝ Սաթենիկ,
 Առաջինը բաց թողնում աղավնիներ սպիտակ,
 Հետևում են թագուհուն բյուր աղատներ և ոսմիկ
 Եվ անհամար թե ու թիւ պսպղում են լույսի տակ:

Ավանդական ծեսերին հաջորդում են խոլ խաղեր,
 Մի տեղ դուսանն է երգում գողթան երգերն հայրենի,
 Մի տեղ վարձակն է պարում՝ դարձած կրքի հրավեր,
 Մի տեղ մկունդ են խաղում կտրիճները պարմանի:

Եվ յոթը օր յոթ դիշեր խրախճանքն այս ոտնական
 Թմբուկներով են տոնում, ծնծղաներով և վինով,
 Մինչև արքան տալիս է ավարտի նոր հրաման
 Եվ մունետիկ է կանչում փողոցներում՝ դեռ գինով:

Փա՛ռք Վանատուր աստուծո, փա՛ռք Վահագնին, փա՛ռք
Հոգին,

Ծով են դարձել արաերում ցորյանները ոսկեգիւտ,
Ու տնքում են հնձաններն զեզերի տակ խաղողի,
Գինին առատ և աչնքա՛ն, տակառներում լաշանիսա:

Գինին առատ, հացն առատ, ձիթապտուղն է առատ...
Տերունական զորքը կուշտ դեմ կգնա թշնամուն,
Եվ պարծենկոտ Հոռմի կայսրը հիմա հուսահատ
Պարտված զորքն է իր տեսնում Աշտիշատի կիրճերում:

20—12—14 թ.

Պ Ա Տ Ն Ե Շ Ը

(Տին տաք)

Մատն են իբրև Սեանք հնում
Մի ծով է եղել Սե ծովի նըման
Ու քաղաքներ են եղել ավերում,
Փարթամ աժաններ, գյուղեր տնըման:

Մատն են նրա ջրերում երեր
Նավեր են եղել արքանքով բարձած
Ու ճամբորդել են հեռու երկրներ,
Փոխադրել պղինձ, բամբակ, բուրդ ու հաց:

Մի շար թագավոր եկել Հայաստան
Տեսել է փառք մեր հողի ազատ
Պահանջ է դրել, որ ծովն իրեն տան
Թովի հետ մեկտեղ երկիրն հարազատ:

Չոխվ է եղել, արյունոտ կոխվ,
Նժ պատվախնդիր նախնիներն հայոց
Մարտեր են մղել տարիներ տնթիվ
Ժուար զորքի դեմ՝ վըրեծով հուր-բոց:

Առյուծների պես կռվել են նրանք
Մայր հողի համար ու ջրի համար,
Արհամարհել են ամեն մի վտանգ
Եվ պաշտպանել են մեր ժառանգն արդար:

Թշնամին անհույս դիմել է դա՛վի
Հսկա ժայռեր է ջրում կուտակել
Փակել շորս կողմը մեր Սևան ծովի
Որ թողնի մերոնց վիճակում անել:

Այդպես պահելով զորքը շրջապատ
Նա տիրել է մեր ջրին ու հողին,
Բայց մեր կորովի կտրիճներն անպարտ
Դուրս են վտարել նորից ոսոխին:

Պատմում են իբրև լեռների խորքը
Մի ճանապարհ է եղել գետնատար,
Անունն է եղել «Արյան ճանապարհ»
Այդ ճանապարհով անցել է զորքը:

Անցել ու զարկել թշնամուն անարդ
Ու ջախջախվել է բանակը նրա,
Որպեսզի նախանձ թագավորը այդ
Էլ աչք չտնկի մեր հողի վրա:

Քարե պատնեշը սակայն այդ օրից
Հնար չի լինում խորտակել երբեք,
Ու նախկին ծովը դարձել է մի լիճ
Մի լիճ՝ որ ավաղ—չունի ո՛չ մի ելք...

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ ԱՅԿԱՐԱՅԸ

Գիշեր էր խավար և մեր երկնքում
Դեռ կուտակ էին դեզերն ամպերի,
Վերջին գիշերն էր դառնահեծ, տրտում...

Ծերուկ Մասիսի սիրտը վշտաբեկ
Լուռ մորմոքում էր գիշերում այդ սև
Իր որդուն թաղած հոր մի նման հեզ...

Պայթեց հյուսիսից մի մրրիկ հանկարծ
Ծվատեց ամպի դեզերը փերթ-փերթ
Հայոց լեռների ուսերին շոքած...

Աստղեր շողացին պարզկա երկնքում
Հեքիաթ պարտեզի ոսկի նուան պես,
Կակաչների պես բոցավառ, քրքում...

Բացվեց վարդավառ այգը լուսաշող
Եվ հայոց փարթամ լեռների ուսին
Արևը փռեց պատմութանն իր շող...

ԽԱՋՄԻ ՕՐԵՐԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐԸ

Քշել է գիշերը, գիշերը սև,
Կապարածույլ ու ծանր...
Եվ որպես հսկա մի շարաշուք դե
Դավադիր ու համր՝
Փաթաթվել քաղաքի վզին
Նեղղում է թաթովն ահեղ...

Մութ է փողոցներում և տխուր...
Հրկիզված տներից կիսափուկ
Բարձրացող ծխերի հետ վառողի՝
Դեռ լսվում են հնդկունները խուկ
Մայրերի, մանուկների դեռատի...

Երեկ դեռ արև էր պայծառ,
Ծիծաղ էր, լիսթյուն և փառք
Մեր երկրի դաշտերում անծայր.
Փայտում էր երկինքը կապույտ
Ռուս աղջկա աչքերի պես ծափ...
Ո՞ր ձեռքը դարանակալ, անդուծ,
Խոցատեց սիրտը առեկ...
Ո՞ր ստոր և նենգ ելուզակը
Շրջում է ալժմ տնից տուն,
Եվ ո՞ր բորենին անկշտում
Ցցած իր արյունոտ կզակը
Ոռնում է մեր հայրենի դաշտում...

Ահա գերման վանդալները լկտի
Իրենց խենեշ հաճույքի համար
Անգթորեն փշրելով նետեցին մեկդի
Փառակերտ մի արձանի թևերը մարմար...

Սակայն ահավասիկ, որ ուռւ լեզվով
Խոսում է կարծես փշրված արձանն այն,
Եվ նրա ձայնը հոգեխոսով
Հնչում է զերթ արդարության ձայն.
«Գերմանիա, Գերմանիա, երբեք չկարծես,
Որ այսօրան շարիք ու այսօրան արյուն
Իմ ժողովուրդը պիտի ների քեզ...»

Ահա հնչում են ձայները գուալիների,
Որպես անեծք, որպես հառաչ, որպես ողոր...
Վիրավոր մատներով խփում են լարերին
Գուալյարները լուսաբերան,
Սրտներումը և՛ թախիծ, և՛ ցասում, և՛ բողոք՝
Գուալյարները լուսաբերան
Ասես խփում են ժողովրդի սրտի լարերին...
Ու կարծես ընդհատակից մի մրմունջ,
Բազմապատիկների ձայնը մի ձայնի մեջ—
Միանում է այդ երգին սրտառուչ,
Դարձնում է այն՝ անհունորեն անվերջ...

Ու ես լսում եմ այդ հանգերգը
Որ գիշերում կրկնվում է անդադար.
«Գերմանիա, Գերմանիա, երբեք չկարծես,
Որ այս շարիքն ու արյունն անարդար
Մեր ժողովուրդը պիտի ների քեզ...

Սրցունքով ու կարոտով, վշտերով անմխիթար
Նորից եմ գրում ահա, բազմաթիվ անգամ նորից,
Քո երկար լուսնունդ դարձել է մի ծանր քար
Ու նստել սրտիս վրա... կասկածն է կրծում հողիս...

Մեկնելիս ինձ խոտացար կգրես ուր էլ լինես,
Անցել է երեք տարի ոչ մի տող չես ուղարկում.
Մտածիր, հեշտ է ապրել, սպասել կարոտակեզ,
Զէ՞ որ ես կին եմ և մայր,—երկու սեր մի հատ սրտում:

Զէ՞ որ ես մայր եմ արդեն և սիրո ծաղիկը մեր
Վաղուց է պտղավորվել, կրում է միս ու արյուն,
Արջունով եկավ աշխարհ երազդ երջանկաբեր,
Անունը դրինք Վրեժ, հայկական մի հին աշուն:

Վրեժդ շուտով արդեն կլինի երեք տարու,
Նկարով քեզ ճանաչում, խոսում է նկարիդ հետ,
«Մամա՛ ջան—ասում է ինձ—հայրիկը ե՞րբ է գալու»,
— Գարնանը անուշ բալիկ, դարնանը բոլորի հետ...

Նայում է իմ աչքերին ու կարծես չի հավատում,
Քեզում է մի բան ասել՝ լուծում է նա գլխիկոր.
Նայում եմ իր աչքերին, կարդում եմ նրա սրտում
Մեծերի վշտից էլ մեծ մանկական վիշտն ահա՜նոր:

Նկարը ուղարկում եմ նամակիս մեջ ծրարած,
Սրտիս հետ ու վշտերիս, մայրացած իմ սիրո հետ:
Բալիկիդ համբուրելիս շտխրես, չլաս հանկարծ
Հիշելով մեր առաջին գիշերը երանալետ...

Նամակս վերջացնում եմ՝ վշտերիս լինի վախճան,
Երկյուղս մեծանում է ամեն օր տարիներով...
Կարոտ եմ մի տող գրիդ, ուղարկիր ինձ պատասխան,
Մի՛ թողնի ինձ վշտահար, բալիկիդ սիրտը խռով:

13-8-44 թ.

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Գրված՝ Կերչի մարտերում գրված հայ
հերոսի ընկեր՝ ուկրաինացի Վասյայի
կողմից:

Քո Սերգոն կվերադառնա, քո՛ւյր,
Լաց մի՛ լինի...
Բալիկիդ ինձնից՝ հայրական համբույր,
Լաց մի՛ լինի...
Փայփայի՛ր նրան, մեծացրո՛ւ, քո՛ւյր,
Լաց մի՛ լինի...
Վրեժիդ ինձնից՝ հայրական համբույր,
Լաց մի՛ լինի...:

Ես Վասյան եմ ուկրաինացի,
Սերգոյի վաշտից.
Բանակում մի օր քեզ նման լացի
Մի ահեղ վշտից...
Լուր առի՝ Կիևում մեռել է որդիս,
Իմ Անդրյուշան,
Սպանել է նրան իր մոր կողքին
Ոսոխը դաժան...:

Սերգոն այդ օրն ինձ այսպես ասաց,
«Վասյա՛, լսի՛ր,
Թախիժը չպետք է ծանրանա երբեք
Զինվորի ուսին.
Զինվորը մարտում չպետք է խորհի
Թախիժի մասին:

Մի՛ տխրիր, Վասյա՛, կհասնի օրը
Դատաստանի,
Սեղմի՛ր հրացանդ, խիզախի՛ր կամբդ,
Լաց մի՛ լինի...:

Ես նույն խորհուրդն եմ տալիս քեզ, քույր,
Լաց մի՛ լինի...

Բալիկիդ ինձնից հայրական համբույր,
Լաց մի՛ լինի...

Փայփայի՛ր նրան, մեծացրո՛ւ, բո՛ւյր,
Լաց մի՛ լինի...

Վրեժիդ՝ Վասյայից հայրական համբույր,
Լաց մի՛ լինի...:

Ների՛ր տողերիս պարզ ու անկեղծ,

Ես պոետ չեմ,

Բայց երեկ կարդացի մի պոետի

Խոսքերը ջերմ.

Գրել էր այսպես, «Սպասիր դու ինձ

Մի օր կգամ,

Թեկուզ բոլորը, բոլորը կարծեն

Որ է՛լ չկամ...»

Ս Պ Ս Ս Ո Ւ Մ

Սպասում ենք ահա ձեր հաղթական դարձին,
Առյուծասիրտ քաջե՛ր, դյուցազուննե՛ր խիղախ,
Երբ դոփելով կանցնի վրնջացող ձեր ձին
Մեր հայրենի երկրի փողոցներով ուրախ:

Երբ ձեզանով հպարտ ու կարոտով անգին
Կհամբուրենք հոգնած ճակատները ձեր պերճ.
Փողոցներում այդ օր տոն կլինի կրկին
Եվ խրախճանք անբավ ու ցնծություն անվերջ...

Երբ ծովի պես հորդող՝ արևի պես հրակ
Հայաստանի գինուց անուշահամ և զով,
Հաղթողների կենաց կդատարկենք բաժակ
Քարի դալուստ մաղթող հարազատի խոսքով:

Երբ սրտաբուխ ձայներ կաղաղակեն ցնծուն
—Փա՛ռք մեր գիրկը դարձող մարտիկներին անսլարտ...
Շեփորների ձայնը կալեկոծի հեռուն
Կարձազանդեն նրան մեր լեռները հըպարտ:

ՄԱՅՐԱԿԱՆ ԿԱՐՈՏ

Տղաս կովից տուն պիտի գա,
Գիր եմ ստացել,
Գրի ծոցին նկարը կա,
Հերոս է դարձել:

Հերոս տղաս գալիս է տուն,
Ճամբան արոտ է,
Սպասում եմ գիշերն արթուն
Սիրտըս կարոտ է...

Գնամ դաշտից ծաղիկ քաղեմ
Շաղ տամ ճամբեքին.
Թոնիր վառեմ, լավաշ թխեմ
Կանչեմ ամենքին:

Մառանի սառ անուշ գինին
Գնամ դուս հանեմ,
Իմաց անեմ դուռ-դրկիցին
Սեղան բաց անեմ:

Դալի ու գուռնան թող նվագի,
Ասեն աչքալուս,
Ինքս էլ պարեմ մի «Տրնգի»
Պարեմ մինչ ի լուս...

Տղաս կովից տուն պիտի գա
Գիր եմ ստացել.
Հարսանեկան շորերս հագա,
Զահել եմ դարձել...

ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ես հրպարտ եմ, որ ապրում եմ այս դարում,
Դարն այս մեծ է ու պայծառ.
Հաղթանակով, փառքով է նա զարգարուն,
Արևներով մշտավառ:

Ես հրպարտ եմ, որ իմ կյանքը զոհ բերի
Հայրենիքի սուրբ գործին,
Հանուն ներկա, հանուն գալիք օրերի,
Ազատության լուսածին:

Ես կուլեցի երդում տալով որ մի օր .
Ճակատըս բաց կնայեմ
Հայրենական վեհ Մասիսին դարավոր,
Հրպարտ կղգամ որ հայ եմ...:

7-5-45 թ.

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԹՐԸ

Հաղթանակի շեփորն հնչեց,
Յնծա՛, երկի՛ր իմ սիրասուն:
Երգըս անուշ՝ հոգուն քո մեծ
Ընծա՛, երկի՛ր իմ սիրասուն:

Մաքառեցիր կրծքով արի,
Հըպարտ երկի՛ր իմ սիրասուն,
Որ շմնաս պարտյալ գերի,
Անպարտ երկի՛ր իմ սիրասուն:

Մեծ պաշարի ճամբով անցար,
Խիզախ երկի՛ր իմ սիրասուն,
Մարտի ելար հողիդ համար,
Անվախ երկի՛ր իմ սիրասուն:

Ահա նորից կանգնել ես դու
Հերոսն ինչպես,—ի՛մ սիրասուն,
Աչքըդ հառած գալիք հեռուն,
Փարոսն ինչպես,—ի՛մ սիրասուն:

ԼՈՒՅՍ ԶՎԱՐԹ

ԳՍԸՈՒՆ

Նորից պճնել են դաշտերն իմ երկրի
Արեն է փթթել ծիլերի սրտում.
Հողի արգանդը նորից կբերկրի
Նորից կծփա՝ ցորենը արտում...

Զմրուխտ արտերը կուռճանան, կաճեն,
Ոսկի կդառնան բորբ արևի տակ
Ու կբաղցրանան քիշմիշն ու խարջին,
Ոսկի կդառնան ցորենն ու բամբակ...

Յողն է մեղմ իջել ցողուններին թաց
Ու շողշողում է որպես ադամանդ,
Այն մեր քրտինքի շիթերն են թափած,
— Փա՛ռք հայրենական հողին արդավանդ...

Ահա ժպտում են դաշտերը անծիր
Վաղվա ծով բերքի հույսով խանդավառ,
Ես երգն եմ լսում խաղողի, հացի,
Մայր հողից ծլած տնկերի հազար...

Նորից զուգվել են դաշտերն իմ երկրի,
Արեն է փթթել ծիլերի սրտում.
Հողի արգանդը նորից կբերկրի,
Նորից կծփա՝ ցորենը արտում...

Ա Յ Գ Ա Ր Ա Յ

Այգն է բացվել շաղով, շողով
 — Սարի գլխին նախշուն նարոտ,—
 Սիրտս է բացվել տաղով, խաղով,
 Հազա՛ր հույզեր, հազա՛ր կարոտ...

Դաշտն է հագել կանաչ ատլաս,
 — Ո՞ւմ հարսնիքն են տոնում այսօր...
 — Ո՞վ է թափել բուռ-բուռ ալմաս
 Արոտներում այս փառավոր...

Արև արքան ուշխին նստել
 Արագածից իջնում է ցած,
 — Ճամբա բացեք դաշտ ու հանդեր
 Սիրտս յարին կարոտ մնաց...

Արև արքան մտավ այգի,
 Խուրջիններում առատ հինա.
 Հինան բաշխեց ծառ ու ծաղկին,
 Համբուրվում են նրանք հիմա...

Վեր կաց, մարա՛լ, վեր կաց յա՛ր ջան,
 Դուռդ եմ բախում ես սիրաջեր.
 Վեր կաց անգին իմ սիրեկան,
 Մի տես ո՞վ է շեմքիդ կանգնել...

Ողջ գիշերը ես անձրափ
Մպասեի եմ կարոտագին,
Անց եմ կացել դեռ ու քարափ,
Որ դամ հասնեմ քո զարթոնքին...

Այդն է բացվել շաղով, շողով,
Մաքը կապեց գլխին նարոտ.
Սիրաս է բացվել տաղով, խաղով,
Հազա՛ր հույզեր, Հազա՛ր կարոտ...

24—6 - 39 ք.

ԴԵՂՁԻ ԿՈՒԹՊ

(ԼԲԴ)

Տեսե՛ք, տեսե՛ք, դեղձի ծառի
Դեղձերը դեղձան,
Դեղձերը ոսկի,
Հապտերները, որ կվառին
Թելերով կախված
Ամեն մի ոստից:

Տեսե՛ք, տեսե՛ք, բարն ու բարին
Ծփում է այգում
Ծովի պես վարար.
Խերով եկավ մեզ այս տարին
Բաղդավոր դառնա
Աշխարհին արար...:

Տեսե՛ք, տեսե՛ք, ծառի թառին
Հորերը ոսկի
Քնել են մուշ-մուշ.
Գնա՛նք թափ տանք դեղձի ծառի
Դեղձերը հասած,
Դեղձերը անուշ:

Անուշ տղա՛, լարի՛ր թառիդ
Սիմերը արծաթ,
Սիմերը լուսե.
Դեղձեր քաղող սիրած յարիդ
Դեղձի պես անուշ
Վառ երգեր հյուսե:

Մոցիկիս մեջ երկու դեղձ կա,
 Նարնջի քաղցրիկ
 Դեղձի պես համով:
 Կուղես՝ կտամ, աստված վկա,
 Մենակ թե քաղեմ
 Երգերիդ դամով:

25-3-44 թ.

ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆ

Շողերն արևի ատլաս են քաշում,
— Օ՛ հայոց երկրի ոսկեղեն աշուն...

Շողերն արևի կարոտով անդին
Գոտի են կապել վազերի մեջքին...

Ոսկեղծովել են ողկույզները լույս,
Մեն-մի հատիկում՝ ողջ մի արշալույս...

Ժպտում են անուշ, դերթ մանկան աչեր,
Հատիկները վառ, հատիկները ջեր...

Որքա՛ն վառած ջահ, որքա՛ն թույր ու բույր.
Որքա՛ն կիրք ու սեր, որքա՛ն հրապույր...

Խաղողի այգում խնջույք է այսօր,
Հորդել է բերքը, երգը մեղրածոր:

Խաղողի այգին դարձել է հիմի
Մի շքեղ սեղան, մի փարթամ սինի...

Մի վազ այրվում է կրքից անսասման
Արբունքի հասած աղջկա նման...

Կարծես կանչում է մեկին, որ ճմլի
Հատիկներն իրեն, ճթերն հյութալի...

Հուլիս—կաթ է ծորել կապույտ երկնքից
Մայրական սրտի սիրո պես անբիծ...

Եվ օրհնեցում է խաղողի այգին
Միրաք բաց արած մայր արեգակին.

— Փա՛ռք քեզ արեգակ, փառքդ շատ լինի:
Դու անմահական հրանյութ գինի,

Դու որ ջնուցիր իմ արգանդում բոքը
Հնձանի վաղվա գինին լուսահորդ.

— Փա՛ռք քեզ արեգակ, փառքդ շատ լինի...

ՀԱՅՐԵՆԻ ԱՇՈՒՆ

Այն ո՞վ է փռել գորգերը նախշուն
Կանաչի վրա, սարերի լանջին,
Թիկնել է հանգիստ զաւլան է քաշում,
Ականջ է դնում ջրի կարկաչին...
— Այդ դո՛ւ ես, դո՛ւ ես, ոսկեհո՛ւր աշուն...

Այն ի՞նչ էր ցոլաց հեռուն մշուշում,
Հույսի պես մաքուր, երազի պես ջինջ...
Եվ ո՞վ էր անցավ որպէս մեղմ շրշուն .
Թփերի մոտով՝ փարվեց կանաչին...
— Այդ դո՛ւ ես, դո՛ւ ես, իմ չթնա՛ղ աշուն...

Ո՞վ էր շաղ տվեց տաքացած փոշում
Ոսկի հատիկներ, արեւի միջին...
Այն ո՞վ է բռնել ու ձեռքս է քաշում
Համբուրում է ինձ, շունչը իմ շնչին...
— Այդ դո՛ւ ես, դո՛ւ ես, հայրենի՛ աշուն...

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՂՈՒԿ ԶՈՒՐ

Գողթդ մեծ է Երևանի պաղուկ ջուր,
Շողթդ շողուն՝ անապական արծաթ է.
Աղբյուրներդ մի-մի երգ են կարկաչուն,
Կաթիլներեդ լույս ու արև կկաթեն:

Ով քեզ խմի՝ չի՝ մոռանա հավիտյան,
Անուշ համիդ հատը չկա աշխարհում.
Դու հոսում ես Արագածից անըման,
Մեր դաշտերի ծաղկանց բույրն է քո սրտում:

Ջուր չի ասել օտար պոետն անվանի
Երբ խմել է քո սառ ջրից քաղցրահամ,
— «Նեկտա՞ր է սա, մե՞ղր է, կա՞թ է թե գինի...»
Զրիդ նրման պայծառ մնաս, Երևա՛ն:

ՕՏԱՐ ԵՐԿՆԻ ՏԱԿ

ԿՐԿՆԱՏԵՍԻՒՂ

Վյանքից դառնացած երկրում այս օտար,
Զորշ Սենի ափին կանգնած հուսաբեկ,
Դիտում եմ երկար պատկերս անկատար
Գլխիվայր ընկած ջրի մեջ բեկբեկ:

Մերուկ մի ձկնորս կարթն է իր գցել
Ու սպասում է որսին անձկագին,
Խնչպես ինձ կյանքում նետել են խայծեր
Ու կամեցել են որսալ իմ հոգին:

Դիտում եմ գետը ու միտք եմ անում,
Խնքրս ինձ խոսում, ժպտում ու լալիս,
Հիշում եմ հազար մտերիմ անուն,
Հիշում եմ տունըս, հիշում ու լալիս...

Տեսնում եմ մորըս, մի քարի վրա,
Նստել ափունքում բուրդ է լվանում.
Կսում եմ տխուր երգն իր հնօրյա,
Կսում եմ մի ձայն... «բարի աջողում»...

Սենք աչքերիս դարձել է երազ,
Դյուրթիչ մի երազ, անծայր, անմեկին.
Ու այդ երազում տենչանքով անհաս՝
Ուղում եմ կարծես համբուրել մեկին...

Փոխվում է հանկարծ պատկերն անցյալի,
Դեմքերը ծանոթ կորչում են մեկ-մեկ.
Անհուն կարոտի կըրակն անձկալի
Այրում է կուրծքս, հոգիս վշտաբեկ:

Մի բարակ շղարշ ծածկում է կամաց
Հուշերիս դեղնած էջերը տրտում,
Եվ ահա նորից դորշ Սենտմ Բենիամ
Գլխիվայր, բեկբեկ՝ պատկերս է դողում...

1933 — Փարիզ

ԲԱԼԼԱԴ

ՄԻ ԽԱՂՈՂԻ ՎԱՋԻ ՄԱՍԻՆ

1.

Արտաշատ գյուղում, ուր մի ժամանակ
Թագավորներ են ապրել ու բանակ,
Ուր Արտաշեսի ձեռքով հաղթական
Կանգնած պարսպի քարերից դեռ կան,
Աճում է վաղուց մի դաշար այգի
Վառ շողերի տակ պայծառ երկնքի:

Այգում այդ դաշար հազարների մեջ
Կայծկլտում էին երկու սեր անշեշ,
Երկու որթատունկ, երկու քահել վաղ
Մեծանում էին ինչպես վառ երազ.
Ու կապվել էին սիրով առհավետ
Այգումն այդ դաշար, այգում ծաղկավետ...

Երբ արեգակը ամեն առավոտ
Սրբում էր մեկի սաղարթը ցողոտ,
Մյուսն զգում էր համբույրը նրա
Իր սիրակարոտ շրթների վրա.
Երբ երկու սրտեր սիրով են կապված
Նրանց սրտերին իջնում է աստված...

Երբ սաստիկ տապից այրվում էր հանկարծ
Մի վազի քնքուշ սիրտը ծարաված,
Մյուսը նրան ասում էր մեղմիկ
— Զգում եմ ծարավդ, սրտիս հատորիկ...
Երբ երկու սրտեր սիրով են կապված
Դառնում են մի սիրտ, մի հույզ, մի կասկած...

Երբ գլուզի փոքրիկ մանուկների շար
Այգու ծտերին նետած քարերից
Մեկը ընկնում էր մի վազին հաճախ՝
Մյուսն ասում էր հուզով կարեկից
— Վա՛խ իմ սիրելիս, իմ ծիլն էր կարծես
Փշրվեց քարից ու ցավեց այնպե՛ս...

Այսպես սիրա սրտի մի քանի ամառ
Ապրեցին նրանք երազներով վառ.
Այսպես կողք կողքի մի քանի աշուն
Աճեցին նրանք այգում այս նախշուն.
Այսպես շունչ շնչի մի քանի ձմեռ
Տաքացան նրանք ջերմ սիրով անմեռ...

2.

Ո՞վ կմտածեր, որ մի դժբախտ օր,
Մի օտարական անծանոթ եկվոր,
Պիտի գա հեռվից արժատից հանի
Վաղերից մեկին ու հետը տանի...
Երբ երկու սիրտ կա կապված մեկ մեկու
Մեկի խոր վիշտը դառնում է երկու...

Ո՞վ էր մարդը այն, որ եկավ տարավ,
Սիրահարների սիրտը կես արավ...
Եկավ ու խնդրեց այգեպանին ծեր
Հայրենի երկրից մի անգին նվեր.
Վազն ի՞նչ իմանա, որ նա տառապող
Մի պանդուխտ հայ էր Հալեբում ապրող...

— Տանեմ դալարի,—ասաց պանդուխտը,
Կատարեմ մորըս սրբազան ուխտը...
Հայրենի հողով փաթաթեմ նրան,
Հայրենի ջրից ջուր ցողեմ վրան,
Շապիկս հանեմ մեջը ծրարեմ
Կանեփ դերձանով շորս կողմը կարեմ
Որ չորանա ծիլը այս անգին
Մինչև հասցընեմ տնկեմ մեր այգին,
Տնկեմ մեր այգին,—ասաց պանդուխտը,
Կատարվի մորըս սրբազան ուխտը...

Ու տարավ վազը հասցըրեց Հալեբ
Անփորձ, անվտանգ տուն բերեց մի կերպ.
— Բերել եմ մայրի՛կ... իղձըդ ի կատար,
Բերել եմ վազը փափգըդ արդար...
Հայրենի հող կա նրա արմատում,
Է՛լ դու ջթախժես տխուր ու տրտում...

Մայրը որ տեսավ վազը դալարուն
Թվաց թե սրտում ծաղկեց մի գարուն.
Ժպտաց ու լացեց, պինդ սեղմեց գրկին
Հայրենի հողը կարոտով անգին.
Տարավ որ տնկի խաղողի վազը
Զմեռած տեսնի սրտի երազը...

Աչքի լույսի պես հետևում էր նա
Խնամում էր միշտ, որ չորանա
Ամեն առավոտ մտնում էր այգի
Որ տեսնի արդյո՞ք երազը կյանքի
Աճում է, ծլում ու հասակ քաշում,
Օտարության մեջ հոգին չի մաշում...

Անցավ մի քանի երջանիկ ամիս,
Մի օր էլ, ավաղ, այգին մտնելիս
Հեք մայրը տեսավ որ վազը չկար,
Դառը հեկեկաց, լաց եղավ անկար.
Վազի փոխարեն պառկել էր հողին
Չորացած, վտիտ, մի մացառ գեղին...

Հալերի հողը չեղավ տաք բարուր
Գրկելու նրա արմատը գանգուր...
Հալերի շողը շուներ այնքան ուժ
Որ տաքացրներ իրանը քնքուշ...
Հալերի ջուրը պաղուկ էր այնպես
Որ դովալներ սիրտը բոցակեղ...
Հալերում չկար ընկերն այն մաքուր
Վազը սիրական... ու սիրտն էր թափուր...
Անհաս կարոտից նա մի օր մեռավ
Լույսի, արեի ու սիրո ծարավ...

3.

Արտաշատ գյուղում՝ ուր մի ժամանակ
Թագավորներ են ապրել ու բանակ,
Ուր Արտաշեսի ձեռքով հաղթական
Կանգնած բերդերի քարերից դեռ կան՝
Աճում է հիմա մի չքնաղ այգի
Վառ շողերի տակ պայծառ երկնքի:

Բերքի բեռան տակ կոացած հողին
Անհամար վազեր հասած խաղողի՝
Ողկույզներն իրենց կախել շարեշար
Մայր հողի հիմն են երգում հրաշափառ...
Սառ հատիկներին նստել է փոշի,
Մի տամուկ փոշի, խավը թավիշի...

Այլ սակայն մի վաղ երազի նման
Հիշում է ահա րոպեն բաժանման...
Հիշում ու թախծում՝ ինչպես մարդկային
Հոգին է թախծում մեծ վշտի պահին...
Եվ մտածում է թե արդյո՞ք նա էլ
Որին պոկեցին մի օր անարգել
Ապրում է ազատ, ապրում է իրավ
Թե չորացել է մայր հողին ծարավ...

29-3-45 թ.

ՄԻ ԿԱԹՈՒԼ ԱՐՅՈՒՆ

Բաժանվեցինք մենք իրարից
Եղերական օրն ահավոր...
Հիշում ես, իմ արյունակից,
Ես ասացի կգա մի օր,
Կգա մի օր ու մենք կրկին
Կմիանանք... լաց մի՛ լինի,
Դու նայեցիր ինձ տրտմազին
Տարակույսով աչքերըդ լի...:

Հիմա տեսա՞ր որ խոսքը իմ
Դարձել է փաստ ուրախալի,
Ես գիտեի որ թշնամին
Ահեղ մի օր կտապալվի...
Ես գիտեի, որ հնար չէ
Կաթիլն արյան թրով մի ժանտ
Զարկել, կիսել ու անջատել,
— Մենք այդ կաթիլն ենք անբաժան...:

ՆԱՄԱԿ ՏԱՐԱԳԻՐ ԲԱՐԵԿԱՄԻՑ

Գրում ես՝ որ պիտի գաս ներգաղթի կարավանով
Մայրենի երկիրը քո,—հեռավո՛ր իմ բարեկամ,
Գրում ես՝ «ա՛լ չեմ տոկար, կարոտըս դարձեր է ծով,
Հերիք է որքան ատեն մնացի թափառական...»

Խոսում ես քո բարբառով ինձ ծանոթ ու մտերիմ,
Թվում է ձայնն եմ առնում տարագիր միլիոնների...
Ասում ես՝ «լալո՛ւ բան է, հավատա՛ ինձ, եղբայր իմ,
Թափառիլ անհայրենիք, չար բաղդի կամքին գերի...»

Ասում ես՝ «ա՛լ չեմ կրնար ես քաշ գալ ասիերն օտար,
Պանդուխտի ցուպըս մաշած դարձեր է մի սև անեծք,
Ա՛խ ծանր է հայրենիքեն անջատված ապրիլ երկար
Նրազի ճամբուն վրա՝ լալագին ու դառնահեծ...»

«Պիտի գամ ու կարոտով ես փարվիմ մորըս ծունկին,
Արցունքիս հետ միասին արյունըս պիտի բերեմ,
Քրտինքըս պիտի բերեմ ու խառնեմ ձեր քրտինքին,
Ինչ ունիմ, ինչ մնաց ինձ սեփական՝ հին օրերեն...»

Կարդում եմ քո տողերը այնպե՛ս պարզ ու հարաշատ,
Տողերիդ թախիծի մեջ արյունած սիրտդ եմ կարդում.
Քո վիշտը ե՛ս կարող եմ ըմբռնել ամենքից շատ,
Զէ՛ որ ես քեզ պես պանդուխտ ապրել եմ օտար հողում...

Բարո՛ւ գաս, իմ հեռավո՛ր, տարագի՛ր իմ բարեկամ,
Ճամբիդ են ծիածանվող հազար աչք կարոտագին,
Գրկաբաց սպասում է քեզ հողը հայրենական
Հարազատ մայրը ինչպես՝ տուն դարձող իր գավակին:

Շ Ո Փ Ե Ն Ա Վ Ը

Հեռանում է ահա դանդաղ
Հին Բեյրութի մատուցներից
Ծանր ու հսկա մի շոգենավ
Ծափերի տակ շոնթալից:

Երկինք հասնող նրա կայմին
Ծածանվում է սեգ, հաղթական,
Արյան գունով բոցակարմիր
Մի դրոշակ սովետական:

Նա գիծն ուղղեց գեպ հեռավոր
Ափերը լույս մեր աշխարհի,
Դեպի փարոսն այն լուսավոր,
Ուղեցույցը նավորդների:

Հազարավոր հայի սրտեր
Բաբախում են նավի վրա,
Ծով են դարձել կարոտն ու սեր,
— Հայրենի՛ նավ, առաջ սուրա՛...

Այն ո՛վ մնաց հին Բեյրութի
Գորշ քարափում՝ սրտամորմոք...
— Մի՛ լար մայրիկ, գալիք հերթին
Դու էլ կգաս քո որդու մոտ...:

ԳՆՈՒՄ ԵՄ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Գնում ես մայր Հայաստան, ճամփան քո բարի լինի,
 Ուզում եմ լաց չլինել, որ հոգիդ արի լինի,
 Մի տարով հեռանում ենք իրարից, անո՛ւշ տղաս,
 Ինձ համար տխուր տարին՝ քեզ ուրախ տարի լինի:

Իրավ է, ծանր է տղա՛ս, բաժանվել թեկուզ տարով,
 Ի՛նչ արած, աստծու կամքն է, ասում եմ «գնան բարով»,
 Երբ հասնես երկիրը մեր, ողջունես հողը սիրով՝
 Մայրական օրհնանքն տար հարազատ Ստալինին:

Մաղթանքն երախտավոր սիրուն հետ դու նրան, տար,
 Ասա՛, որ ես օրհնում եմ անունը նրա արդար,
 Փրկարար ձեռքը սեղմիր մեծ Մարդուն այն հոգատար,
 Թող նրա արձանը լույս՝ Արարատ սարին լինի:

Ասա՛ դու նրան, տղա՛ս, որ մի մայր ունես պառավ,
 Ապրում է օտար հողում՝ հայրենի հողին ծառավ,
 Ասա՛, որ մեծ եղբորդ օսմանցի թուրք տարավ,
 Պանդուխտ եմ անտուն, անտեր, ահեժքն չարին լինի....:

Ասա՛, որ մորդ թոզիք Աթենքում օտարական,
 Աթենքը ի՛նչ ճար անի իմ սրտին արյունաքամ,
 Ճարն այն է, որ գարնանը նավ նստեմ ու մոտդ գամ.
 Մի ծածկն էլ ինձ հերիք է, թեկուզ չոր քարին լինի:

Մ Ե Ր Տ ՈՒ Ն Ը

(Զուգերգ)

Մուխն երդիքեն քուլա՛-քուլա՛,
Քաղցր օրհնությունն գեղի մեր տան...
— Երդիքն հիմա նստեր կուլա,
Ճիտ են ծոեր մաճ ու զութան...

Հաց կը թխե մայրըս աղվոր,
Խմորն առա՛տ, հարսս է շաղվեր...
— Փուռն է սառած դամբան մը խոր
Ուր մորս օրհնյալ ձեռքն է թաղվեր...

Երինջն անուշ կը բառաչե,
Քո՛ւյրս իր լեզուն կհասկընա...
— Գո՛մը դատարկ կը հառաչե,
Ոչ ոք լեզուն կհասկընա...

Գիշերն է զով—կալի գիշեր—
Հասկն է արծաթ, լուսեն լուսնի...
— Արտերուն մեջ—տխո՛ւր հուշեր—
Յորենի տեղ փուշ կբռանի...

1924—Փաբիգ

ՋԱՆԱԿԻՐՆԵՐԸ

ՄԵՍՐՈՊ

«Վասն որոյ եղ ի մտի հնարել զտանել
նշանագիրս հայոց լեզուիս, և արկյալ
զանձն ի ջանս պէսպէս փորձիւք տա-
ծաներ»

Մ. ԽՈՐԵՆԱՅԻ

Նա Հացեկում՝ հացի կարոտութիւն չունի,
կիութիւնը ծով էր հայրենական հարկում.
Նրա սրտում սակայն անօրինակ սով էր,
Իմաստութեան քաղցն էր նրա հոգին լլկում:

Նա հեռացավ գյուղից, թողեց և՛ տուն, և՛ սեր,
Կրքեց սքեմ, հագավ վիշտ ու խորհուրդ անճար.
Մի ուրիշ սեր գերեց նրա հոգին վսեմ,
Լույսի ձայնը կանչեց նրան մի օր տաճար:

Նա հնազանդ անսաց լուսաշեփոր ձայնին,
Չայնն աչք՝ ձայնն էր բազմաց, երկրի ձայնովն հղոր.
Հայրենական հողի խավարահեծ կաղնին
Ողորում էր արև և լույսն հանապազոր:

Չայնիցն ահեղ այրն այն՝ Տարոնացին Մեսրոպ,
— Պայծառադեմ և վեհ, ճշմարտութեան հանգույն,
Դողաց մի պահ, զգաց երակներում տրրոփ
Եվ թախիծը չոգեց անպարագիր հոգուն:

«—Ո՞վ տեր, ծանր է խաչն իմ, և ես՝ հյուլեա շնչին
հոռովահույզ, անօգ, անձկությամբ եմ պատյալ,
Տո՛ւր զորութիւն, որ ես ժողովրդի կանչին
Դառնամ ծառան արժան և շամաշեմ պարտյալ:

Էե՛ր կարեկից, ո՞վ տեր, ժողովուրդն իմ ահա
Զերթ բանտարկյալ թշվառ, լույս է հալցում անզոր,
Դու ճառագայթ բարի, աղբյուր լուսո անմահ,
Էեցո՛ւր սափորս դատարկ լույսովդ՝ ամենագոր...»

Իմաստությամբ զինյալ և հավատքով հաստատ,
Տեսանողը դարի՝ երանելին Մաշտոց
Տեսիլքում մեծ տեսաւ, որ իր բազուկն անհաղթ
Կրում է պարզ, անջինջ երկաթ գրերն հալոց:

1—12—44 թ.

Ե Ր Ա Ղ

Դեռ բնարիս լաբերը քաց եմ...
ՍԻԱՄԱՆԹԻ

Նա արթնացա մի երազից ծանր ու ճնշող
Եվ բիբերիս տակ թաց զգացի արցունք.
Ո՞վ էր տղան այն, որի աչքերում անշող
Այի մի մոխիր կար թափված և բուրում էր խունկ...

Նա քայլում էր բաց աչքերով թեպետ թվում էր կույր,
Քայլում էր որպես ոգին հին պապերի.
Իջնում էր Արագածի լանջերից մեր ծաղկաբույր,
Տղան այդ, վսեմ խորհուրդների գերի...

Գալիս էր նա կարծես մոռացված հեռուններից,
Ճամբորդել էր երկար և հոգնած էր թվում,
Սակայն անընդհատ քայլում էր նա նորից
Խորասույզ հղած մտքերի ծովում...

Նա կանգ առավ մի պահ և ծնկի շոթեց
Օշականի մամուապատ մի տաճարի առջև,
Աղոթեց երկար, գուցե մի բան ողորբեց,
Ու նորից քայլեց անաղմուկ, թեթև...

Բարձրացավ մի գագաթ, իջավ ձորն ի վար,
Ոստնեց Արաքսը ուտումով մի անսայթաք.
Թափանաղ ճամբորդին այդ, գիշերում մրրկավար՝
Տեսա լաց լինելիս Անիի պատերի տակ...

Ես արթնացա այդ Լրազից ծանր ու ճնշող,
Եվ բիբերիս տակ թաց զգացի արցունք.
Ո՞վ էր տղան այն, որի աչքերում անշող
Ափ մը մոխիր կար թափված և բուրում էր խունկ...

3—2—45 թ.

ԴԱՆԻՆԻ ՎԱՐՈՒՓԱՆ

Դանիել, Գուսանապետ դու հեթանոս,
Քո՛ւրմ անմահ, հայ դպրության բազմաքանքար,
Մարգարե և ջահակիր, անշեջ փարոս,
Սերունդներ մարտի հանող ըմբոստ քնար...

Ո՞ր անգութ և դավադիր ձեռքը մի օր
Կտրատեց քո քնարի լարերը լույս,
Որ թողնի «Յեղին սիրտը» արտասովաթոր,
Խափանի «Երգը հացիդ» դառնակոորույս:

Բայց մի՞թե կարելի է լույսը թաղել,
Շղթայել արեգակը հավերժավառ...
Թշնամին իզուր փորձեց լարել դավեր
Մարելու քո երգերի ջահը պայծառ:

Շողում է և կշողա նա առհավետ
Սրտերում մեր ճառագած՝ արևն ինչպես,
Քալում ենք անմարելի արևիդ հետ,
Երգերիդ շնչով հզոր և բոցակեզ:

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Հեռու հեռուն բռնկվեց բոցակարմիր հրդեհում
 Հորիզոնը վարդավառ,
 Ասես բուռ-բուռ երկնքից շաղեցին վարդ ու քրքում
 Արոտներում անհամար:

Շողերն ընկան դաշտերին ու փարվեցին կարոտով
 Քնքուշ սրտին մայր հողի,
 Գարնան բույրով արբեցին մարմանդները ջինջ ու զով
 Ժպտաց այգին խաղողի:

Նորից հնչեց սրնգի երգը անուշ, մեղմօրոր,
 Կարոտի պես, սիրո պես,
 Հորովելն է ձայն տալիս ու ավետում ձորե-ձոր
 Այցը դարնան լուսերես:

Ո՞վ է նստել ունկնդրում ընկուզենու ծառի տակ,
 Աչքերում վիշտ ու երազ.
 — Զայն տո՛ւր Հանճար տառապյալ, եղերական
 Ենահատակ,
 Զայն տո՛ւր, անմահ Կոմիտաս...

Հ. Թ.

Իմաստուն խոսքերը քո թեւովոր,
կուսարգանդ երգերը քո նայիրյան
Հոգիիս հացն եղան հանապազոր...

Նստել եմ քո սեղանին ահա կրկին,
Երգերիդ լավաշներին տաք ու բուրյան
Փաթաթել իմ պոետի քաղցած հոգին...

Ա. Ի.

Դու սիրեցիր անուշ երգը հայրենի,
Հպարտանքը մեր լեռների բարձր ու վեհ.
Դու սիրեցիր վիշտը մեր հնամենի,
Վշտից ծնված ներկան պայծառ, լուսերես:

Քո երգերում կարկաչում են,—օ՜ վարպետ,
Հայրենիքի ջրերը պարզ ու վճիտ.
Դու կապեցիր երկու ափեր իրար հետ,
Կամուրջ դարձար տաշած քարից գրանիդ...

ՖԻՐԴՈՒՍԻ

Հազար տարին անցավ, գնաց
Բայց դու դեռ կաս անգին շայիր,
Հազար ու բյուր տարի կանցնեն
Դու կմնաս ինչպես կայիր.
Ժամանակը փոշի դարձրեց
Շքեղ գահը Մահմուդ շահի
Բայց քո գործը մնաց անմահ,
Է՛յ շահնշահ առանց գահի...

Շ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Գ Ե

Ինչպես մայրին Լիբանանի, հազար կաջծակ լիզած՝ անցած
 Խույ շառաշով ընկնի գետին՝ քամու թաթին վիզը ծրած,
 Այդպե՛ս ընկար դու էլ մի օր ու մեկնեցիր անվերադարձ,
 Սերունդ կերտող հըսկա՝ վարպետ, ազգի «նամուս»

Շիրվանդադե...

Կես դար ամբողջ դրե մութճովդ, դու կոփեցիր քանի՜ արձան,
 Քանի՜ լուռ ցավ քո մութճի տակ լեզու առած բողոք դարձան,
 Ժամանակի «Քառս»-ի մեջ եղար լույսի՝ դու սերմնացան,
 «Նավթահորում» հեք բանվորի վշտի ընկե՛ր Շիրվանդադե...

Ի՛նչ բառերով ողբամ մահըդ, դու ո՛վ սլարծանք հայ

Մատյանի,

Ո՛վ Արվեստի Հա՛յր ալևոր, ո՛վ դու հին քո՛ւրմ՝ նոր մեհյանի,
 Արևներեդ քաղված աստղեր, շիրմիդ վրա որպես դափնի՝
 Հիշատակիդ ջահն են վառել. մե՛ծ Գործավոր Շիրվանդադե...

1935 -- Փարիզ

* * *

Ճամբա ընկանք ուղիներով մենք հակառակ
Ուղիները մենք ընտրեցինք—ես՝ իմ, դու՝ քո,
նս չգիտեմ ո՞վ կհասնի մեզնից արագ,
Բայց գիտեմ, որ ճամբումն ենք դեռ—ես՝ իմ, դու՝ քո...

Գ Ո Ւ Ս Ա Ն Ա Կ Ա Ն

ԻՄ ՍԻՐԵԿԱՆ

Ծամերըդ թափել ուսիդ ջրի նման,
Կայնել ես կանաչ աշդում, ի՛մ սիրեկան.
Հոնքերըդ սասմա Դավթի թրի նման
Կեռ ընկած սիրտս են ծակում, ի՛մ սիրեկան...

Հագել ես ալ ու ալվան, դառել ես վարդ,
Երանի բլբուլ յարիդ, ի՛մ սիրեկան,
Լուանդեն հասակումըդ կանգնած հպարտ
Ժպտում է քսան տարիդ, ի՛մ սիրեկան...

Յոթը տակ հողի տակից հանած զլժար
Ադամանդ քար ես անգին, ի՛մ սիրեկան,
Իմ սիրտը մի անխարդախ ոսկե նլժար,
Քաշ շունես քո կշեռքին, ի՛մ սիրեկան...

Գուսանի սիրտն է կարոտ սիրո շնչին,
Ես գուսան, դու մի տաղ ես, ի՛մ սիրեկան,
Ծովի լափ մեծ է սերըս, երգս՝ շնչին,
Շողակաթ ու շարմաղ ես, ի՛մ սիրեկան...

5—5—40 թ.

1.

Երազումս Սայաթ-Նովին տեսա Նորքի մի նոր աչգում՝
Ծնկին դրել ջան-քյամանչան խաղ էր ասում ու նվագում:

Նրա երգի արևի տակ՝ ծաղիկների սրտի խորքում
Մրգերն անուշ հասնում էին ու քաղցրանում թագուն-թագուն:

Ու ճյուղքերում բյուր ծիրաններ շարվում էին հուրքեր դառած
Շեկ խաղողի ոսկի ճթեր վառվում էին կրքեր դառած:

Հազար վարդեր բացվել էին, հազար սմբուլ, հազար մեխակ,
Հազար դեղձան լցվել էին, հազար թփում հազար սոխակ:

Նվագում էր Սայաթ-Նովան, ծովի նման սիրտն էր բացել,
Այնքան հույզ կար, նրա սրտում, ասես կյանքում նա չէր
ածել:

Երեք մեղու նստել էին ծայրն աղեղին՝ մտիկ տալիս,
Անխոս ու լուռ երեք հատ սիրտ ճիպոտի հետ գնում-գալիս...

Վարդամատիկ արշալույսը ծով կամարի մովից անհաս
Բուռով զմրուխտ թափում էր ցած, զառ ջավահիր լալ ու
ալմաս:

Արագածի գլխի վերև մի ոսկե գունդ էր բռնկել,
Ասես նրա ողջ կրակը Սայաթ-Նովու սիրտն էր ընկել:

Նվագում էր Սայաթ-Նովան, ծովի նրման սիրտն էր բացել,
Ու երգում էր դեռ չերգըված անմահական մի նոր դազել:

Ուսերից վար շողշողում էր ոսկեճամուկ մի ծիրանի,
Թանկ մետաքսից հյուսած նրբին, զանափիղից հին Իրանի:

Ծեր Նովան չէր, այլ մի ջահել, մազերը սև, ձայնը հնչուն,
Ասես իրա մոխիրներից վերածնված փյունիկ թռչուն:

Հին քյամանչու սարքն էր նորեկ, աղեղը նոր, լարերը նոր,
Նախըշներ էր վերան փորել, խաղերը նոր, բառերը նոր:

Մի հնգաթև աստղ էլ փայլում էն քյամանչի ճակատին վառ,
Ջինջ սատափից նախշած մի աստղ, արեգակի նրման
սլայծառ:

Նվագում էր սրտերի տեր՝ խալխի նոքար Սայաթ-Նովան,
Ասես բացված մի հըրաբուխ՝ որ թափում է սրտի լավան...

2.

Իմ հայրենի՛ք, դովբդ հմ ասում, ականջ՝ արա երգիս համով,
Փառքիդ վայել բառ հմ ասում, յար հմ ասում մեկ անգամով.
Հազար շայիր քեզ երգեցին, գըրով, գըշով, սուր զալամով,
Ես գուսանի խոսքն հմ ասում, առանց գըրիչ՝ էշխիս կամով:

Քայլած ճամբեդ հա գնացի մինչև հասա հին-հին դարեր,
Հողիդ խորքը քըրքըրեցի՝ տեսա արշուն—ներկ էր դառել,
Փառքդ ու վաստակ՝ փուլ-փլատակ, դոստ դուշմանի կերք էր
դառել,

Մարտի նրման սիրտըդ վառել՝ առանց մահւամ վերք էր
դառել:

Պատմիչները ոսկեդարու, Խորենացին, մեծ նշիշեն,
Անպատմելի ուղբերի մեջ կակիծները մեզ կհիշեն,
Սուգն է թառել քաղաքներիդ, խափարել են գյուղերդ շեն,
Ծվատել են շորը հագիդ՝ ողջ մարմինըդ մերկ է դառել:

Արաբստան, Իրան, Թուրան կոխտուել են երկիրը քո,
Խաչը վրդին՝ Հոռոմ-Լատին նախատել են երկիրը քո,
Հենց քո նամարդ որդկերանքըդ զխատել են երկիրը քո,
Մասսի ձյունը գլխիդ վրա ալիք-ալիք հերք է դառել:

Դարեր հետո բազդիդ գլխին ծիածանը կապեց կամար,
Արևն արդար վառ շողշողաց հաղթանակիդ, փառքիդ համար,
Թշնամուդ դեմ կռվի ելան կարմիր դորքեր՝ գումար-գումար,
Դարեր հետո երկիրը քո ազատության երգ է դառել:

Ցար ու սուլթան քեզ փշրեցին ինչպես հոգե կուժ ու կուլա
Օջախներիդ ծուխը մարեց, դանակ զարկին սրտիդ զուլալ,
Օջախներիդ՝ մարած երեկ՝ ծուխն է ելնում քուլա-քուլա.
Իմ հայրենիք, երկիրը քո, դուր ու հզոր ձեռք է դառել:

Սալբու նման բոյ ես քաշել, կանաչել է ծառիդ ճյուղը,
Ջահել հարսի տեսքն է տուել համայնական քո նոր գյուղը,
Լույսի ծովում լող է տալիս ձորում կորած հետին հյուղը,
Ամեն մի գյուղ, ամեն քաղաք, աշխատանքի ետք է դառել:

Արարատյան դաշտըդ ապատ դառել է վառ մրգի սինի,
Աշտարակիդ բաղերիցը դուրս է ծորում մեղր ու գինի,
Ենե Շիրակիդ ամբարներում ցորենն առատ միշտ կլինի՝
Քանի հողիդ սիրտը լուսե համատարած բերք է դառել:

Նոր տներըդ սանդուխ-սանդուխ ամպերից վեր երկինք
հասան,

Կործարաններիդ բերդերի պես ամրացել են կուռ անասան,
Թվականը Ոսկեդարիդ՝ հազար իննը հարյուր քրսան,
Պապագայի սերունդներիդ հաղթանակի զենք է դառել:

Լոռու շքնաղ արոտներըդ կանաչ ատլաս ծով են նոր մեկ,
Ծովիդ նըման հատը չկա, Սևան լիճըդ մով է նոր մեկ,
Արագածի զառ փեշերին մարմանդներըդ գովեմ նոր մեկ,
'Իոն ոսկե թել՝ ես հին ջուհակ, սիրտըս էշխիդ հենք է
դառնել:

Կանչիդ կարոտ հանդ ու արոտ զուլալ ջրբիդ զնգով լեցուն,
Պարտեզներդ՝ վարդ ու ռեհան սուսամբարի խնկով լեցուն,
Արեակող արտերըդ ծով հազար-հազար տնկով լեցուն,
Բարն ու բարիդ ծափ են տալիս, ծով ցեղերդ հերկ են դառնել:

Աշխարհ-աշխարհ ճամբաներդ գրքի շարած տողի նըման,
Ճամբաներիդ հազար լապտեր արեգակի շողի նըման,
Կախ են ընկել՝ պլպլում են սեգ Թամարի օղի նըման,
Սալաթ-Նովու սիրտը արև՝ սև ու սըքեմ թերկ է արել:

Դըրախտ ասեմ՝ զառ է կասեն, մարդու սարքած բառ է կասեն,
Փիրուզ ասեմ, քար է կասեն, շինար ասեմ՝ ծառ է կասեն,
Էշխիդ գինին խելքս է տարել, հարբել եմ քո պայծառ թասեն,
Յա՛ր եմ ասում, ո՛վ սիրեկան, շողքդ արևելք է դառնել:

30—6—39 թ.

Ջ Ա Մ Շ Ի Դ *)

(Ֆիրդուսու «Շահնամե»-ից)

Երբ աշխարհից մեկնեց հավետ Արքան**) հզոր ու մեծանուն
Հոր փոխարեն որդին դարձավ տերը գահի երկրի անհուն:
Արքայազուն Ջամշիդն էր նա, որ պերճանքով և մեծափառ
Գահ բարձրացավ՝ զլիսին դրած ոսկե թագը արևավառ:
Երկիրն համակ դարձրեց իրեն լուռ հպատակ, հլու գերի
Հրամանի ներքո էին պարիկ, թռչուն, դե ու փերի:
Խռովություն ու թշնամանք երկրից վանեց, անհետացրեց,
Ու աշխարհի փառքն ու պատիվ բազմապատիկ նա դարձրեց:
Իր շնորհիվ հետզհետե փայլ ստացավ գահն Իրանի,
Ամեն դասի մարդիկ իրենց բաղդին տվին բյուր երանի:

«Նա ինքնակալ թագավոր մի ու մովպետ եմ ասաց արքան,
Իմ մեջ շողա փայլն աստուծո, որ տանում է լույսի ճամբան.
Ու չեմ թույլ տա ես չարերին, որ չարիքներ նյութեն անարգ,
Իմ աշխարհում խաղաղություն պետք է տիրի և կարգ ու
սարք...»

Ու մտածեց նախ ամբարել ռազմի պիտույք ամեն կարգի,
Որ քաջերն իր հարթած տեսնեն ճամբան փառքի, հաղթանակի.
Ու ձեռնարկեց հորինելու պես-պես գործիք կռվի հատուկ,
Երկաթն առավ՝ ծեծեց ուժգին ու դարձրեց խմոր փափուկ,
Շինեց զրրահ, խույր, սաղավարտ, նիզակ, սվին ու լանջապահ,
Հիսուն տարի նա աշխատեց, զինուց սար մի դիզեց հսկա:

*) Ըստ ավանդության նրա թագավորութունը տևել է 700 տարի.

**) Թահմուրաս թագավորի մասին է ակնարկությունը. — Ծ. Հ.

Հետո նույնքան հիստուն տարի նա պատրաստեց հագուստեղեն,
Որ զորքն հագնի ռազմի պահին, որ ցուրտն ու բուր է՛լ

չնեղեն:

Ազնվամորթ բյուր կենդանյաց բուրդը խուզեց, մազը առավ
Ոլորելով կազմեց թելեր, ու արվեստի հրով ծարավ
Փնտռեց՝ դտավ կերպերն ամեն պատրաստելու քթան, կտավ:
Թեև մանելը երբ սովորեց, նա բացատրեց իրեն մարդոց
Ինչպե՞ս պետք է հինել, հյուսել, ձևել, կարել զգեստ ծածկոց:
Նա ուրախ էր ու երջանիկ ու իրեն հեռ աշխարհն ամբողջ
Յնծովյամբ լի փառքն էր երգում մեծ արքայի երկրի տիրոջ...

Այս ամենը երբ վերջացրեց՝ մոտը կանչեց արքան մի օր
Երկրի բոլոր արհեստակից մարդկանցն իրեն աշխատավոր
Ու բաժանեց նրանց դասի, ու պաշտոններ հանձնեց նրանց.
Հիստուն տարին անց էր կացել բոպեի պես, վաշրկյանը հանց...
Հերթն էր հասել պաշտամունքի ու աղոթքի ծեսերին մեր,
Մարդիկ ընտրեց, կազմեց մի դաս՝ որ Քաթուղյան անուն
կրեր.

Լեռը նրանց կայան արավ ու զատելով մյուս դասից
Պաշտոն հանձնեց, որ աղոթեն, դառնան լույսի հաղորդակից:
Մի ուրիշ դաս կազմեց նույնպես, որ Նիսարյան անվամբ
հայտնի

Քաջամարտիկ առյուծներից բաղկացած էր—շատ անվանի—
Սրանց հանձնեց պաշտպանությունն երկրի բոլոր
սահմանների,

Որ անվտանգ մնա հողը, որ թշնամին մեզ չտիրի:
Երրորդ դասը—լավ իմացի՛ր—Նասուղիի դասն է հյու,
Որ կոչված է հողն հերկելու, սերմանելու և հնձելու:
Սգատ, անփուլթ և ինքնապո՛հ հողիներ են սրանք խոնարհ,
Ո՛չ վեճ ունեն, ո՛չ էլ բողոք, աշխատում են երկրի համար:
Իրենք ուրախ՝ ու իրենց հեռ երկրի բազմն էլ շեն ու պայծառ,
Յնցոտիներ ունեն հագած, բայց ծուլությունն կատեն իսպառ:
Չորրորդ դասը Ահնուխուշի արհեստավորք են, իմացի՛ր,
Որոնց միտքն է միշտ ալեկոծ բյուր հոգսերով անծայրածիր...

Մի կես դար էլ այսպես անցավ... շատ բարիքներ նա
պարգևեց,

Ամեն մեկին իր արժանի տեղը դրավ, պղտիկ թե մեծ.
Ու ցույց տվավ նա ամենքին ուղին կյանքի, ուղին շիտակ,
Որ ամեն ոք պարզ ճանաչի պարտքն իր արդար արևի տակ:
Հետո արքան հրամայեց անմաքուր ցեղ՝ բյուր գեներին
խառնել ջուրը հողի հետ լավ. գեներն խկույն կատարեցին...
Կատարեցին՝ ու երբ տեսան շաղախն այդ սև խյուսի նման
Կաղապարի մեջ թափեցին, գործի դրին հազար աման.
Մտածեցին, որ լպրծուն ցեխն հնար է շորացրնել
Ու շորացած աղյուսներով տներ, շենքեր բարձրացրնել:
Հետո գեներն սկսեցին շարել պատեր պլինդ քարերով,
Որոնց վրա ամրացրին շքեղ շենքեր ճարտար ոճով.
Ու կառուցին ճոխ պալատներ ու բաղնիքներ խիստ աննման,
Մի շենք էլ, ուր հողնած մարդը գտներ հանդիստ ու
սպաստան:

Մի միջոց էլ նա որոնեց կարծր ու կոպիտ քարերի մեջ
Այն հազվագյուտ քարերն ազնիվ, որոնց գեղն ու փայլն
էր անշեջ:

Ու ձեռք բերեց բազում աղեր, ինչպես հակինթն ու դեղին
սաթ,
Պես-պես գույնով այլ գոհարներ, ինչպես ոսկին, ինչպես
արծաթ:

Խորախորհուրդ ու հմայիչ արվեստովն իր ջանաց ջոկել
Էնտիր քարերն պարզ քարերից. լուծեց գաղտնիքն այս
անարգել:

Հետո շինեց հոտայուղեր ախորժևի ու քաղցրաբույր,
Ինչպես հալվե, մուշկ, բալասան, ինչպես համապար ու
վարդաջուր:

Հետո գտավ բժշկությունն ու հրնարեց դարման ու դեղ,
Որ մարմինը մնա առողջ, որ վերք ու ցավ չըբռնեն տեղ:
Անմեկնելի ամեն գաղտնիք դարձրեց մեկին, պարզ ու
հստակ,

Իրեն նման որսնող միտք դեռ չէր ծնել արևի տակ:

Այնուհետև նա ճամբորդեց, նալ նստելով անցալ ծովեր
Ու ալցեկեց երկրե-երկիր, գնաց հասալ օտար հողեր:
Ահա ալսպես նա բոլորեց մի նոր շրջան հիսուն տարու
եվ աշխարհի գաղտնիքներին տիրեց մտքովն իր խուզարկու:

Այս մեծամեծ բոլոր գործերն երբ ավարտած գտալ մի օր,
Իրենից զատ մարդ չտեսալ երկրի վրա արժանալոր.
Ու բազմազան ձեռնարկների հաջողութիւնն իրեն մզեց
Ավելի վեր բարձրացնելու իր պանծալի անունը մեծ:
Արքայական գահ մի շինեց, շքեղ գահ մի ականակուռ
Ու զարդարեց այն գույնզգույն գոհարներով հնգար ու բյուր.
Վրան նստալ ու դեերին հրամայեց վերցնել իրեն
Տանել մինչև երկնակամար, թրոցնելով վեր ամպերեն:
Բոլոր մարդիկ հավաքվեցին շուրջը նրա շքեղ գահի
Ու հիացած բաղդի վրա անզուգական մեծ արքայի՝
Բյուր նվերներ, թանկ գեղօրներ զլիին նրա հեղեղեցին
Եվ ալ զ օրը շատ իրաւամբ, նեւրուզ—նոր օր—անվանեցին:
Օրն էր օրն ալս նոր տարիի, օրն առաջին Ֆերվերդինի
Երբ ամեն մարդ ցնծութեամբ լի, հուլզերով հորդ՝ կմպեր
գինի:

Այս օրն էր, որ մարմինն հանգչեր աշխատանքի իր խոնջենքեն
Ու մոռանար սիրտը մարդու ամեն տեսակ հին ոխ ու քեն:
Բերկրանքի մեջ իրենց անհուն՝ մեծերն փութով տուն

սարքեցին,

Գինի, բաժակ, նվազածու և երգիչներ պահանջեցին.

Այսպես է, որ ալս փառահեղ տոնը մինչև ալսօր տևեց,

Անխախտ մնաց ու հասալ մեզ իբր հիշատակ արքայի

մեծ...

Երեք հարյուր տարի անցալ... Օրհնյալ շրջան երանավետ,
Ուր մահն ալլես անծանոթ էր, ուր երջանիկ էր մարդն հավետ.
Ու չգիտեր ի՞նչ է վիշտը, ի՞նչ է ցավը, կսկիծն ի՞նչ է,
Դժբախտութիւնն է՛լ չէր հիշում, խինդն իր շողի նման

ջինջ էր:

Փերինները, դեերն անգամ հագված-սքված կունկնդրերին

Նվագների ձայներն անուշ—մեղեդիներն զրախտային...
Տարիները սահում էին խաղաղությամբ ու երջանիկ
Ու Զամշիդը երկրի վրա բարդում էր միշտ մի նոր բարիք:
Նա արարչից ամենակալ երբ ստանար մի նոր պատգամ
Միշտ նույնությամբ իրեն մարդկանց հաղորդում էր
հոժարակամ...

Բայց մի շար օր հանկարծ—ավա՛ղ, այս մեծաշուք հզոր
արքան
Իր գահից զատ, իր անձից դուրս չուզեց տեսնել և ո՛չ մի բան.
Ու աչքերն իր հառած գահին, իր մեծ ուժին ու բռնության
Նրեւ դարձրեց նա աստծուց, դարձավ գոռոզ, ամբարտաւան:
Ու կանչելով արքունիքի ու բանակի մեծամեծաց
Այդ ալեհեր հին քաջերին՝ սիրտ խոցոտող խոսքեր ասաց.
«Երկրի վրա ինձնից բարձր ոչ ոք չկա. ե՛ս եմ միայն.
Ինձնով ծնվեց այս աշխարհում խելքը—ուժը իմաստության.
Ու փառապանծ արքաների այս գահերից և ոչ իսկ մին
Կեռ չտեսավ ինձպես հզոր արքա ու տեր ամենեկին:
Նվ իմ կամքի արդյունքն է լոկ երկիրն այնպե՛ս՝ ինչպես
որ կա,

Ե՛ս անթերի կարողացա կառավարել հողն այս հսկա:
Ձեր սնունդը, քունն ու հանգիստ, դուք ի՛նձ է որ լոկ
կպարտիք,
Դարձյալ ի՛նձ է, որ կպարտիք ձեր հագուստը, ամեն բարիք:
Իշխանություն, թագ, պետություն, ի՛մն են բոլոր, ե՛ս եմ
որ կամ,

Ո՛վ հանդգնի ասել, որ կա ինձնից բացի ուրիշ արքա:
Ե՛ս փրկեցի մարդկությունը հիվանդության ճիրաններից,
Իմ դեղերով, բժշկությամբ, ե՛ս վանեցի մահն աշխարհից:
Իմ շնորհիվ դուք տեր դարձաք իմաստության, խելքի, մտքի,
Ինձ չպաշտողն Ահրիմանի բաժին է լոկ ու վատագի:
Արդ, հիմա որ քաջ հասկացաք թե ինչ բարիք ես ձեզ արի
Պետք է իմ մեջ դուք ճանաչեք ստեղծողը այս աշխարհի...»

Ծեր մոզպետներն լուռ կախեցին գլուխները ծանր ու տխուր։
Ոչ ոք փորձեց պատասխանել այս խոսքերին բիրտ ու

անլուր։

Արքայի այս ճառից հետո մարդիկ դարձան անհամաձայն,
Աստծու շնորքն ու բարիքներ իսպառ կորան, անհայտացան։
Եվ ամեն մարդ երես դարձրեց Զամշիդ շահի գահից հզոր,
Մեծերն նրան շուտ լքեցին ու հեռացան վշտով անզոր։

Նրանք իրենց հետը տարան բանական հորդած ծովի նման
Ու պալատից դուրս ապրեցին քսաներեք տարի լման։

Երբ մարդկային միտքը հանդուգն չուզեր լսել բանն արարչի,
Նա ինքն իր մեջ կբալքայովի, կփշանա ու կկորչի։

Իզուր չէ, որ մի իմաստուն մարդ ասել է վաղուց այսպես,
«Եթե նույնիսկ արքա լինես, եղի՛ր խոնարհ, եղի՛ր միշտ հեզ,
Եվ իմացի՛ր, որ թե մեկը չըխոնարհի աստծու առաջ

Նա կգտնի ողջ իր կյանքում, արյուն, արցունք, ողբ ու

հառաչ...»

Զամշիդ շահի օրը մթնեց ու խավարեց ինչպես դժոխք,
Շիջավ աստղը, արեն իր վառ՝ որ աշխարհին տվավ հուր-

շողք։

Արյունն հոսեց աչքերից վար ու գլորվեց կրծքից դանդաղ,
Նա աղերսեց բյուր թողու՞թյուն... սակայն արդեն ուշ էր,

ավա՛ղ...

Աստված նրան լքեց ընդմիշտ ու զլացավ դու՞րս ու շնորհ,
Ոճիրն իշխեց երկրի վրա սարսափներովն իր նորանոր...

1935 — Փարիզ

Գ Ե Ր Վ Ի Շ Ը

(Վ. Հյուգոյից)

Մի օր Ալին անցնում էր,— Ալի փաշան մեծանուն,
Որի պատվին ամեն ոք իր գլուխն էր խոնարհում,
Անգամ հպարտ գլուխներն թեքվում էին մինչ գետին,
— «Փա՛ռք ալլահին, փա՛ռք պետին...»:

Մեկ էլ հանկարծ մի դերվիշ՝ տարիների բեռն ուսին,
Ճեղքեց ամբոխն խուռներամ, առաջ անցավ համրաքայլ
Բռնեց պախուցն արծաթյա, կանգնեցրեց նրա ձին՝
Այսպես խոսեց անաչլալ:

«Ո՛վ Ալի Տեպեկենի, ո՛վ դու լույսը լույսերի
Որ բազմում ես պերճորեն սուլթանական դիվանում,
Որի անունն ամեն օր առավել է մեծանում,
Լսի՛ր խոսքերն այս ծերի.

Ունկն դի՛ր ինձ, ո՛վ վեզիր, ստվերն մեծ փառիշահի
Որ ստվերն է իր հերթին ամենազոր ալլահի,
Որքան էլ դու հոխորտաս, քեզ նկատես ընտրյալ՝
Դու մի շուն ես անիծյալ:

Դու մի փայլուն սրվակ ես լի շարիքով անհամար,
Հուր ես թափում անընդհատ մարդկանց պխին հեղ ու խեղճ,
Նրանց անզոր վզերին սրսկում ես տիրաբար՝
Մանգաղն ինչպես խոտի մեջ:

Դու շաղխա ես պատրաստում ապարանքիդ համար պերճ
Ոսկորներից ամբոխի՝ լուծված արջան մեջ բոսոր,
Բայց չգիտես որ վաղը պիտի լինի կյանքիդ վերջ
Մինչ հրճվում ես դու այսօր:

Մոտ է ժամը և շուտով ժանինայում հնօրյա
Ոտքերիդ տակ պիտ փլչի հողը՝ դառնա քեզ շիրիմ,

Հայնժամ աստված քեզ փրկեւ վզիդ անրից երկաթյա,
Պատիժներից երկնային:

Եւ դժոխքում յոթերորդ, ուր Սեղծինի ծառից վար
Կախված դողում են ընդմիշտ անբարիշտներն անհամար,
Այդպէս դու էլ պիտ. դողաս ժանտ խավարում ահալի,
Ու շարագործ դու Ալի:

Պիտի խույս տա հոգիդ մերկ. ոճիրների քո գրքից
Մի սատանա պիտ կարդա ցանկը ամբողջ զոհերիդ.
Անուններով մի առ մի, որոնք կազմած շրջագիծ
Պիտի թքեն երեսիդ:

Եւ կմախքները նրանց ամեն կողմից՝ որպէս ծով
Պիտի վազեն դեպի քեզ արդարութեան գոռոցով,
Պիտի տեսնես դու նրանց, նման կարմիր կրակի
Արշունն՝ առանց երակի...

Եւ անձկութեան պահերիդ պիտի մնաս դու անօդ
Ամբռնությունների անառիկ, հազար բերդ ու թնդանոթ,
Ամուր թիերն եփենոս նավատորմին քո հզոր
Պիտի մնան խիստ անզոր...

Այս աշտպէս է, ո՛ւր Ալի, չկա ո՛չ մի խուսափում,
Եթե նույնիսկ դու փորձես ինչպէս հրջան է փորձում
Մահից առաջ նենգութեամբ փոխել անունն իր զազիր
Սատանային խաբելու հանդերձալում անբասիր՝
Զուր է փորձդ, ո՛ւր Վեզիր»...




Ալին իր թանկ մուշտակի տակից մի թուր էր կրում,
Թուրանական մի կեռ սուր՝ ոսկեքանդակ պատշանում,
Հետո երեք պիստոլետ և մի դաշույն երկսայրի՝

Հին ընկերներ ռազմերի:

Նա լսեց լուռ, անվրդով, խոսքերը ձեր դերվիշի,
Սիրտը լցվեց թախիծով ու տխրութեամբ վերհուշի,
Հետո անխոս նա հանեց մուշտակն իրեն թանկագին
Ու նվիրեց ծերուկին:

(Թարգմ. բնագրից)

ԽՈՒԹԵՅԻ ՀՈՎՆԱՆ



ԽՈՒԹԵՅԻ ՀՈՎՆԱՆ

(Պատմա - հերոսական վիպերգ)

*«Ժբ ընդ զերեսայն ի լեռնեն Խուլթայ
Յովնան անուն. սա այն է, որ մինչ ելա-
նելն Բուխայի ի սկզբանն մտածելոյ
նորա ի Հայս՝ եկաց ընդդեմ՝ նորա ընակ-
չոք լեռինն եվ հաքուածս մեծամեծս հա-
տոյց ի վերայ զորացն արքունի...»*

Թ. ԱՐԾՐՈՒՆԵԻ, ԳԼ. ԺԱ. Էջ 188.

Ո՛վ մեծափառ իմ ժողովուրդ, հավերժակա՛ն դու իմ մուսա,
Փառքիդ դռան ծունկ եմ չոքել—ես՝ հեռնագույն մի հայ
դուստն:

Լուսաճաճա՛նչ դու արեգակ, ծո՛վ անհատակ իմաստության,
Ջահավառի՛ր միտքս այսօր, որ դարերը հոգիս կարդան...

Ահա Հայկյան աղեղի պես մտքիս լարը քաշել եմ պիրկ,
Սիրտըս շինել նետը նրա, բաց եմ թողել դարերի գիրկ,
Բաց եմ թողել որ սլանա պատմության լույս ճամբով անափ,
Կայծակի պես ճամբա կտրի, կամուրջ դառնա թոռնիկից՝
պապ:

Որ սլանա, ակնթարթում հաղար տարին թողած ետե,
Ո՛վ իմ մուսա, ուժ ու թափ տուր, տո՛ւր ինձ խիզախ թռիչք
ու թև,

Տո՛ւր ինձ շնորհ, իմաստություն, տո՛ւր իմ հոգուն լուսե
թևեր

Դառնամ Սիմուրգն հեքիաթների ու սավառնեմ ամպերից վեր:
Դառնամ արծիվ երկնասրլաց, թռչեմ՝ հասնեմ պապերիս
հոգ,

Փետրիս ծայրով մի գիր թողնեմ ժայռի կրճքին արևակող.
Որի լեզուն բազմախորհուրդ, ամեն դարու մարդը զգա,
Որ հինավուրց ժայռը անխոս դառնա կոթող Քաջին հսկա...:

Քե՛զ եմ դիմում, ի՛մ ժողովուրդ, հավերժակա՛ն դու իմ
մուսա...:

Ն Ա Խ Ե Ր Պ

Փոթորկվել է իմ հուլզերի ծովը հորդուն ու վարար,
Ծանոթ ձայներ սիրակարոտ ինձ են կանչում անդադար...

Հին դարերը լեզու առել՝ խոսում են ինձ մտերիմ,
Իարձել են երգ ու փաթաթվել իմ քնարի լարերին:

Ահա կանգնել դիտում եմ ես լեռները մեր սիգապանծ,
Ու լցվում է հոգիս նորից, հուլզերով վառ ու անսանձ:

Տեսնում եմ ես նրանց խիզախ կատարներում երկնածիղ,
Հայրենավառ հին քաջերի նիզակները սըլացիկ:

Տեսնում եմ ես արևախանձ ռամիկների քիրտն ահա,
Հողի գույնով ու ցորենի՝ մարմինն իրենց բրոնզյա:

Խշխշում են արտերն հասած, սրբազան երգն է հացի,
Հավաքվել են հնձվոր կանայք, աղջիկները խութեցի:

Հասած արտի նրման հուռթի, ստինքներով սիրաբորբ,
Արմենական մեր հարսների սերն է վառել ինձ այսօր:

Ու մշուշում, հեռո՛ւ, հեռո՛ւ, երազի պես ոսկեղեն,
Ժպտում է ինձ մի պայծառ դեմք, ձեռքին մի թուր հրեղեն:

Ու դարերից փոշեթաթավ հասնում է ինձ հաղթական
Ժողովրդիս կամքը հրդոր՝ քայլող պայծառ ապագան:

Փա՛ռք դարերին ասպետական, հերոսներին անվանի,
Փառքով հիշենք մենք արեշատ անունը քաջ Հովնանի...

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.

Կանգնել է պերճ ու հպարտ, Սասունք սարը հաղթական,
Սեգ Մարութա թիկունքին՝ աչքը հռոտ Սիմ լեռան:

Կարոտանքով ժպտում է հեռվից մի կույս նազելի,
Ծովասարն է այն չքնաղ—գովականը լեռների:

Նրա գլխին շողում է որպես անգին մի սուտակ,
Ինչպես գինին վառ թասում՝ զուլալ մի լիճ կապուտակ:

Ու պատմում են ծեր կանայք, որ գիշերվա ուշ ժամին
Լողանում է նրա մեջ Աստղիկն հայոց գիցուհին:

Նրա ջրից բուժվում են այսահարներ ուխտավոր,
Չբեր կանանց արգանդում բերքն է պտղում անսովոր:

Ահա Տավրոսն անվանի, Դադոնաց սարն ու Կնձանք,
Ուր սիրատենչ կտրիճներ սարքել են խոլ խրախճանք:

Հովիտներում մթամած ու ձորերում խորախոր,
Արձագանքում է ահա Գրգուռ գետի վազքը գոռ:

Մշո դաշտն է տարածվել ափունքն ի վար Եփրատի,
Ուր խոյանում է հպարտ հասակն հսկա մի բերդի:

Ողականն է այդ անառ, անմատչելի բերդը վես՝
Ուր բարձրանում էր հնում, արքան հայոց Տրդատես:

Մեր հաստատ և ամուր պարիսպներում ժայռակող
Մամիկոնյանք են կռվել հորդանների դեմ ոտխա:

Ահա Կուրտիկն ու Անդոկ, նեմրուքա սարն ահռելի,
Ուր նահապետ Հայկ դյուցազն կախեց դիակը Բելի:

Բայց ամենից ահարկու և ամենից աժդահա,
Սասնա երկրի քաջ զավակ՝ ցասումնավոր Խուժն ահա...

2.

Կածաններով նեղանցուկ, կապված թաքուն մեկ-մեկու,
Դիրք են մտել տպա դյուզեր, թշնամու դեմ ահարկու:

Կարկառներին լեռների արծիվների պես թառած,
Հսկում են լուռ ու նայում բարձունքներից դեպի ցած:

Երկիրն է այդ հնավանդ, անտառներով թանձրամութ,
Լի ժայռերով, քերծերով, իր անվան պես կարծր ու խուժ:

Քանի՜ անգամ հուլն, արաբ, նվաճել են հողն հայոց:
Ողողել են Տարոնը փաղանքներով բազմահոծ,

Սակայն Խուժի լանջերին ոտք չի հըպել օտարի,
Սարսափել են լեռնական ուղմիկներից քաջարի:

Մնացել է Խուժը միշտ արիասիրտ և ազատ,
Ռամիկի ձեռքն է պահպանել հայրենի հողն հարազատ:

3.

Այդ լեռներում բարձրականդուն
Հովիտներում խոր, մթամած,
Վաղուց ի վեր դրել էր բույն
Հին ժողովուրդ մի խաշնարած:

Ո՞ր աշխարհից արդյոք մի օր
Գաղթել էր նա հալածական,
Ո՞վ իմանա պաղտնիքը խոր
Ժամանակի ու պատմության...

Պատմում էին ծեր գուաններ,
Որ ռամիկներն խուժա սարի
Բազմացել են քաջ, անվեհեր
Զարմից՝ հսկա Սանաաարի:

Ապրում էին խաղաղ ու հաշտ,
Հերկում, ցանում կորեկ, գարի,
Մի քաջ հովիվ քշում էր դաշտ
Նախիրն ամբողջ իրենց թաղի:

Բայց վա՛յ նրան՝ ով վատաբար
Դանակ դարներ խաղաղ կյանքին,
Կամ ծուռ գործեր ու անարդար,
Խուժը կառնե՞ր նրա հոգին:

Չարի հանդեպ շար ու դաժան,
Անսիրտ էին և աններում,
Չարիք նյութող մարդն անարժան
Կյանքը մահին զոհ էր բերում:

Իշխան չկար՝ բայց կար օրենք,
Անգիր օրենքն արդարության,
Ինչի՞ էր պետք իշխանի նենգ
Օրենքը սուտ, դատն ու ատյան:

Իեռներում այդ վեհ, երկնաքեր,
Ապրում էին իրենց համար,
Ռամիկներն այս աշխատասեր
Հայրենիքի սիրով անմար:

«Գեեայք հայոց» ետև շախարհի հոտաղ էին ու որսորդ,
Իշխանագուն դասը փարթամ նրանց երկրին շատ էր խորթ:

Սիրում էին լուկ մի տիրոջ—Մշո իշխան՝ Բագրատին,
Որի համար կյանքը կտար թեկուզ ոամիկը հետին:

Հարգում էին գալիւններին—գրի. մարդկանց իմաստուն,
Ո՞ր ոամիկը սեր չի տածել գիր տարածող լավ մարդուն:

Հոգով հարուստ՝ հողով աղքատ, սնվում էին կորեկով,
Աստված նրանց զլացել էր բարիքներից իրեն ծով:

Կապանների ստորոտում, հաղթ ձեռներով քաջարի,
Պատռում էին ցեղերը կորդ՝ ցափում կլկլ ու դարի:

Ու նրանցից մի քանի կոտ, ամեն տարի, կամովին,
Բերնից կտրում՝ բաշխում էին ժլատ աստծու վանքերին:

Հագնում էին բրդյա քուրձեր, այծեմաղից պատրաստած,
Մորթուց կտրած ամուր օղեր—ոտնամաններ կիսաբաց:

Աշտեն սակայն անսպալկա էր նրանց ձեռքից մկանուտ,
Աշտեններով շրջում էին մութ անտառներն ու թափուտ:

Ուր բնակող գաղանները—գալ ու հովաղ անսվաղ,
Մինչև գյուղի ձորերը խուլ իջնում էին շատ հաճախ:

Ետևա սարերի գրկում աննման,
Ապրում էր մի մարդ—անունը Հովնան,
Մի կտրիճ էր նա, կուրծքը մի ամրոց,
Աչքերը՝ կըրակ, երկու բարկ հնոց:

Ճակատը միշտ բաց, մորուքը դանգուր,
Հոնքերը՝ աղեղ, բեխը թուխ ու մուր,
Մի կտրիճ էր նա, սարերի զավակ,
Գետինն էր թնդում իր ոտների տակ:

Սասնա աշխարհում չկար ոչ մի կին,
Որ գեթ դիմանա նրա հայացքին,
Մի կտրիճ էր նա—մի թառևան թոսուն,
Մհերի զարմից՝ քաջ ու դյուցազուն:

6.

Մինչև Մուշ քաղաք, մինչև Ալաշկերտ,
Հոչակն էր հասել քաջ փահլեանի,
Քանի՜ սիրուններ, հուր-հրաշակերտ,
Երազում էին տեսնել Հովնանին:

Բայց նա անտարբեր գեղեցիկների
Կարթող աչքերին՝ անհաղթ ու համառ,
Թախծում էր լռին—թող աստված ների,
Թե հանցանք է այդ կտրիճի համար:

Մանուկ հասակից սիրել էր մեկին,
Մի իշխանագուն չքնաղ աղջկա,
Ինչպե՞ս մոռանա իր Այծեմիկին
Թեպետ հանգել է ու հիմա չկա...

Հիշում է ահա օրերը անցած,
Հիշում՝ իշխանի ծաղկավետ այգին,
Ուր երկու սրտեր իրարու գրկած,
Միտո երգում են տալիս անձկագին:

Հայրը իշխանի ձիերն էր պահում,
Դատում էր շարքաշ մի ժում փոր—հացով,
Քաղաք էր բերել մեկ հատիկ որդուն
Որ գիր սովորի, դառնա կարգացող:

Հիշում է ծերունի դպիրին բարի,
Գրքերը նրա, սուրբ երկաթագիր,
Նրա մոտ կարդաց լման յոթ տարի
Մինչև սովորեց սաղմոսներն անգիր:

Մեկտեղ կարդացին Այծեմիկի հետ,
Մեկտեղ մեծացան, սիրեցին անուշ...
Բայց հին օրերը անցել են անհետ,
Մնացել է լոկ՝ անցյալից մի հուշ...

Նղո՛վք դաժան հոր՝ Փառնակ իշխանի,
Նա՛ էր թույն խառնեց սիրո մեջ վառման,
Արյունեց երկու սրտեր պատանի,
Կամակոր վճռով դարձավ որդեսպան:

«Ռամիկն իշխանի չի՛ դառնա փեսա»
— Ի դուր աղերսեց դուստրը լալագին—
Պալատի մարդկանց բիրտ օրենքն է սա,
Զկա՛ իրավունք սիրել ռամիկին:

Խեղճ Այծեմիկի սրտում դառնահեծ,
Զծաղկեց երբեք էլ ո՛չ մի երազ.
Անթիվ գիշերներ, լացեց, արտասովեց.
Ծաղիկ հասակում մեռավ անմուրազ...

Եվ Հովնանը արդ անտարբեր, անփուլթ,
Գեղուհիների գերիչ հմայքին
Թախծում է լոին ամպի նման մութ
Հիշելով մեռած իր Այծեմիկին.

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

1.

Փրկր անցան, ձիգ տարիներ... Տասը ձմեռ խստաշունչ,
Տասը դարուն դալարագեղ: Բոլորվեցին լուռ ու մունջ:

Անցնող օրերն իմաստութեան դասեր տվին Հովնանին,
Ժամանակի տված դասը չեն տանի հողմն ու բամբին:

Նա ճանաչեց իշխանների օրենքը շար ու դաժան,
Ոսկեծարավ հողին նրանց, ոսմկի սիրուն անարժան

Առեց փարթամ պալատների բիրտ տէրերին անարգար,
Որոնց խիղճը ոսմկի հանդեպ կարծր է ինչպէս օրծառաք:

Թողեց Բաղեշ քաղաքը հոխ, վերահարձակ նորից ետ,
Բախտը կապեց աշխատավոր ժողովողը բախտի հետ:

Կարձալ դարբին-երկաթագործ, կոնց տեր ու նիւակ
Սրերի հետ սրտեր կոփելն ընտրեց երեսն եպատակ:

2.

Ճամբի եզրին՝ մրօտ ու սև մի դարբնոց կա հովնապատ,
Ուր Հովնանը—սիրտը՝ Սասնա—բանում է ժիր անընդհատ:

Թե՛մ կրակի դեմը կանգնած, կաշվե զոգնոցը հագին,
Ուժեղ բազկով սալի վրա խփում է մուրճն ահագին:

Շինում աշտե, շինում երկակ, շինում զենքեր զանազան,
Ոսոխներից զերծ մնալու—լինի նա մարդ թե՛ զազան:

Քրտինք թափում աշխատում է խառնած գիշեր ցերեկի,
Մի պզտիկ լաճ փութն է քաշում կշտին մի հաց կորեկի:

Ու շիկացած թրի շեղփեր կոխում մեկ-մեկ ջրում սառ,
Շեղփն է թշշում վրեժի պես՝ թուրը փայլում հրավառ:



Քրիստոնյա ու բարեպաշտ՝ տարին մեկ հեղ անխափան,
Մշտնապես սուրբ Կարապետ վանքի բնում է ճամջան:

Լեար առած դրպեն ընծա արծաթակուռ մի բուրվառ՝
 Ուխտի գնում ընծան տալիս՝ վերադառնում խանդավառ:
 Զնքն է կոփել ու կռանել զուտ պողպատից մի խանչալ,
 Որ կրում է հալարտուխյամբ, խրած գոտուն բազմաժալ:
 Պոթի վրա փղոսկրյա անունը կա փորագիր,
 Անունի շուրջ շող-շող աղեր—մարջան, յաղութ ու սափիր:

3.

Ով վեճ ուներ հողի, ջրի,
 Հովնան եղբորն էր վազում,
 Իրավունքի դատը արդար,
 Հովնանի խոսքն էր պարզում:

Ուր կար հիվանդ կամ աշտահար՝
 Նա աշնտեղ էր գիմում միշտ,
 Սաղմոս կարդում երկու գլուխ
 Ամոքում էր վերք ու վիշտ:

Ուր հարսնիք էր կամ խրախճանք,
 Դավը գինու ոչ մի մարդ
 Չէր դատարկում Քաջից առաջ
 Դա կլինեիր խիստ տմարդ:

Առանց թագի ու անտոհմիկ
 Բազավոր էր ու իշխան,
 Գահը նրա՝ ժողովրդի
 Սրտի մեջ էր անտասան:

4.

Ո՞վ է տեսել դարբնին աչղ քաջ
 Սիրտը արդար ու բարի,
 Որ սրբում է լացն ու հառաչ
 Խեղճ ու թշվառ անճարի:

Ո՞վ է տեսել իգիթին սեզ
— Ռամկի նեցուկ ու պաշտպան —
Ձեռքումը հար աշտն ու տեղ
Ջիրիդներում՝ հաղթական:

Ո՞վ է տեսել գիր ու գրիչ
Սիրող խիզախ այն մարդուն,
Հոգին ամուսն երկնի պես ջինջ
Միտքը պայծառ ու արթուն:

— Այդ Հովնանն է խութեցի
Պարծանք փոքրի ու մեծի...

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

1.

Մեհեկի ցուրտ ամիսն է... Բուքն է փչում ամենի
Սասնա ձյունոտ սարերից, ասես բերնիցը մահի:

Զլուն է իշել թանձրափերթ, կաժաններին, քերժերին,
Խաշն է կորել Մարութա վեհ գմբեթի սուր ծերին:

Բացատներում, դաշտերում ձայնն է լռել հոտաղի,
Մարդիկ հյուսերն են մտել՝ դաժան բուքից կատաղի:

Մայրիկների պուրակում հովն է վժժում օձի պես,
Ջոր ու ծմակ տնջում են ձյունի ներքև փրփրադեղ:

Հեռու, հեռու լեռների, փապարների թիկունքին,
Սեպ դագաթներն են ցցել նիզակն իրենց երկնքին:

Ասես բողոք են բառնում աստուծո գեմ չարակամ,
Որ չարիքով լցրել է երկիրն իրենց սիրական:

Մառախլապատ Սիմ լեռան մութ քարայրում այդ ժամին,
Թաթն է կրծում մի սև արջ ու մոնչում ղերթ քամին:

Ու ժայռերում բուն դնող քաղցած ցիններն անսվաղ,
Կտուցներով ջարդում են սառույցն իրենց բնից կախ:

Հեղեղատներ բարձրաթափ շեղջ են դառել՝ կախվել վար,
Ինչպես վազքի մոլուցքում սանձը քաշած երթվար:

Մի շան կաղկանձն է խզում խոր թմբիրը ձորերի,
Գալլի ոհմակն է շրջում,—ահը ձմռան օրերի...

2.

Ձորում կորած հուիկներից
Ծխի կապույտ մի ծվեն,
Ուտրվելով ելնում է վեր
Ինչպես հույսի ժապավեն:

Տո՞ւն է արդյոք, թե թաղստոց
Լեռան ծերպին քարքարոտ,
Մա՞րդ է ապրում նրա խորքում
Մարդու ծարավ ու կարոտ:

Ո՞ւր են երթիկն ու պատերը,
Ո՞ւր սներն ու պատուհան,
Գուցե ձյո՞ւնն է պինդ քողարկել
Վերմակի տակ ամեն բան:

Գուցե վախից շար թշնամու,
Դադաններից աչն վայրի,
Պաշտպանվելու մի հնարք է
Մտնել խորքը քարայրի:

Տուն — քարայրնե՛ր, տուն — քարայրնե՛ր,
Խուժա սարում անառիկ,
Մեկը մեկից թեպետ հեռու՝
Բախտի կապով շատ մոտիկ...:

3.

Հաղաբլիկ են ճախրկանի
Աղջիկները սիրազեղ,
Ու երգելով խաղ ու մանի
Աշխատում են միատեղ:

Խմբով բանում՝ խաղ են ասում,
Գովում սիրած իգիթին,
Նուրբ մատներով զորգ են հյուսում,
Նախշեր դրում կապերտին:

Նրանց մատներն իրանց հողի
Նման թուխ են ու շարքաշ,
Աչքեր ունեն, սր դիտողի
Սիրտն են անում հալումաշ:

Նրանց ծամերն սեից էլ սե,
Մութ դիշերն են Միմ՝ լեռան.
Նրանց սիրտը մի բորբ արե,
Արեի պես հուրհրան:

Ժղլտնում* փակվել ախպես
Խաղ են ասում, կատակում,
Ծափ է տալիս արծաթի պես
Ծիծաղն իրենց զրնգուն:

* Ժղլտուն — Այն սենյակը՝ ուր հաղաբլիկ են, շաղակրատում և աշխատում:

Սիրածըս ջուհակ է
 Մքուք կնեան,
 Աչքը՝ մուր, ունըր՝ թուր
 Աղեղ ու նեւ է,
 Զարկված պախրա եմ
 Աւամն էլ դիտե:
 Էրվել եմ, խորվել եմ
 Սիրուցը նրա...

Բարձրացա սարերը
 Քաղելու փշատ,
 Հանդիպա որսկանիս
 Կուներով շիմշատ.
 Ինձ բռնեց ու պաշեց
 Պաշն անուշ էր շատ...
 Էրվել եմ, խորվել եմ
 Սիրուցը նրա...

Սիրածըս գով աղբյուր
 Զրով աննման,
 Գուռի տակ կայնել եմ
 Մեկ տարի լման.
 Բռնել եմ չի լցվի
 Սրտիկիս աճան...
 Էրվել եմ, խորվել եմ
 Սիրուցը նրա...

Ծագել է արեգակ
 — Ոսկե շարժաղ է—
 Սիրածըս մեջ արտին
 Գլու կքաղե,
 Զգիտե ո՞ւմ սրտին
 Կրակ կշաղկ...
 Էրվել եմ, խորվել եմ
 Սիրուցը նրա...



Սասնա լեռը սև ու մութ,
Ճամբեքը դժար ու խուժ,
— Մարութա մատաղ գինեմ
Կատարե սրտիս ումուղ:

Ջաղացիս քարն է տաշած
Յորենըս, գարիս քաշած,
Մեռնեմ կեռ-կեռ ունքերիդ
Ոսկե զալամով քաշած:

Տապալիս տակ քարոտ է
Կշտին կանաչ արոտ է,
— Օխտը տարի չուր էսօր
Սիրտըս յարին կարոտ է:

Իրիշկեցեք են զշին
Ոտը դրել է փշին,
Դիվանա պալուզ կլիմ
Թե որ սիրեց ուրիշին:

Մշո սարը մշուշ է,
Հողն ու ջուրը անուշ է,
— Մեռնեմ թառլան են տղին
Բոյը բարակ զամուշ է:



Այսպես անուշ երգում են, վառ կարոտով, սիրով լի,
Ու չսկիտմ են քարզյահներ մատների տակ նազելի:

Մին գործում է նուրբ փուշի, մետաքս թելով ալ դեզին,
Որ փաթաթի սիրած յարն իր ըսպիտակ քոլողին:

Մին հշուտում է շաւ-շապիկ, գզած բրդից ոչխարի,
Մեկ ուրիշը՝ երկար ճար, մեջքի համար իր յարի:

Մին շարում է ուլունքներ եղբւր փուշու նրբահշուտ,
Մին պատրաստում խալանն իր, ձեռն ջանֆուս, դանավուզ:

Այծեմազի թեւերով մին գործում է երկու տակ
Մահեկաձե նախշերով շախմախ-ղամի մի քսակ:

Ու որպեսզի պինդ կապի սիրած տղի սերն իրեն՝
Հշուտին խառնում երկու թեւ իր արբշում մաղերեն...

5.

Բանթողի ժամն է արդեն, էլ հերիք է աշխատել,
Քարգյահները գցել են, հավաքել են կծիկ, թեւ:

Ու թևիթե պարում են, հեղաձկուն ու քնքուշ:
Մին նրանցից կրկնում է պարի երգերն քաղցրանուշ:

Ոստյուններով համաշափ թռչկոտում են շուրջպարում,
Խումբն է պարում՝ բայց կարծես մի հատ աղջիկ է պարում:

Մերթ կատաղի ու առույգ, մերթ նազանքով ծեփներուն,
Կաքավում են հեղանաղ՝ սիրո բոցով բռնկուն:

Շորերն իրենց ծալիծալ ծփծփում են մեղմօրոր,
Թրթրում են շապկի տակ ծծերն իրենց—երկու լոր...

Հանկարծ ծնկներն են ծալվում՝ նորից կանգնում շեշտակի,
Ասես հովն էր մտալ արտ՝ ծռեց հասկերն կորեկի:

Շխշխկում են վզից կախ ուլունքները բաղմաշար,
Դաստակներին շողում են զարդերն իրենց ոսկեմառ:

Ու պարում են, պարում են... մին թաշկինակ է ճոճում,
Ու քաշում է ետևից, պարը՝ երգով հարածուն:



Լսօր ուրբաթ ու պաս է,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Սիրտս արծաթու թաս է,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Տերտերն ասա՛վ չհաս է
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո:

Կանչեմ գիշեր ու ցերեկ,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Էսօր լավն է քանց երեկ,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Իմ սրտի լարն ինձ բերեք,
 Ձնգա, զնգա հոպ լո, լո,

Տղա, քո գլխի փուշին,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Իմ դոշ զարկեմ քո դոշին,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Ինչ որ հալվեն մեջ լոշին
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո:
Ոսկե ուլունք շարել ես,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Նետդ սրտիս լարել ես,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո,
Հոգիս անթել կարել ես,
 Ձնգա, զնգա, հոպ լո, լո:

6.

Մինչ՝ Սասնա քաջերն հեռու անտառում,
Ձեռներին աշտե, ուսից՝ նետ-աղեղ,
էս բուք-բորանին որս են որոնում,
Լեռներ թափառում, թողած տուն ու տեղ:

Մասնա սարերում աշծյամներ վայրի,
Մաքիներ պարարտ խմբով ման գալիս,
Հանկարծ փախչում են, մտնում քարայրի
հորքերն ու կորչում, որսկան տեսնելիս:

Բայց որսկանների նետերն են դիպուկ,
Որս չի խուսափել նշանց նետերից,
Ահա սլացող մի հովազ գիրուկ
Թավալվեց գետին՝ դարնված սրտից:

Երնեկ այն յարին՝ ում սիրտը ջահել
Կտրիճ որսկանի սիրով է լեցուն,
Ով ծաղկի նման իր սիրտն է պահել,
Որ նվեր բերի իգիթ խուլեցուն:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

1.

Զյունն է թափվում փերթ առ փերթ, փաթիլներով անդադար,
Իջնում խաղաղ դաշտերին, փակում ձերպ ու առապար:

Մածկում ամեն մի բացատ, բլին չոքում ձորերի,
Ասես ոստին է խուժել՝ դարձրել հողը գերի:

Զի երևում Մուշ տանող, ճամբան երկար, ոլորուն,
Զյունի միջից մի անցորդ, ուղեկորույս, մոլորուն:

Նոր արահետ է բացում ըռշիկների հետքերով
Ու քայլում է գլխահակ ծանր ու բարակ մտքերով...

Ի՞նչ է արդյոք մտածում ձերունին այդ անծանոթ,
Ի՞նչ է փնտռում այդ ժամին, ո՞ր ճանաչին է կարոտ:

Անցորդն հասավ գյուղամեջ, կանգնեց ժամի փակ դռան
Բացեց գլուխն ալեհեր՝ աղոթք արավ մի բերան:

Ու մի խոշոր խաչ ձևեց կրծքին խորունկ հավատքով,
Որ կբավեր խաչելու երկու Հիսուս քովի-քով:

Հետո դարձավ թափ տվեց կապան ձյունով ծածկված,
Սրբեց մորուքն ու բեխեր, մաղախն ուսից դրեց ցած:

Տխրաթախիծ հայացքով դիտեց շորս դին ամայի,
Վիշտն իր հոգում ծովացավ՝ դարձավ ցասում ամենհի:

Մի ծանրը՝ միտք կրծում էր վրդով հոգին արյունոտ,
Վաթսունամյա ծերուկի... Ի՞նչպես գուժել մահվան բոթ...

Մի պահ լռեց ու հանկարծ օգուտ կախված մի թևից
Խլեց պարանը զանգի՝ քաշեց իրար ետևից...

Ջանգի տխուր ձայնը բուրբ արձագանքեց ձորե-ձոր,
Ինչպես գուժկան բոթաբեր, տարածվեց սար ու ծործոր...



Սասնա բոլոր ուռիկներն տներից դուրս թափվեցին,
Այծյամների պես արագ ձերպերից-ձերպ ցատկեցին:

Վազում էին ու գոռում, որ թաղերին իմաց տան,
Ահազանգն այս մահադուժ, վիճակը գեշ Սասնա տան...

Բռնաշենից, Մոզկանից, Խուրի հեռու ծայրերից
Թափվեց ամբոխն ահարկու՝ հեղեղն ինչպես ժայռերից...

Գալիս էին Ագրակից,
Գալիս էին Փեղոնքից,
Գալիս էին Շնիադից,
Գալիս էին Գելոնքից,
Թաղավանքից ու Շեկից,
Ճախրկանից ու Կոռից
Գալիս էին Բողկանից,
Ամեն թաղից ու ձորից...

«Հեյ ժողովուրդ, լսեցե՛ք, կոտորում են Տարոնում,
Երբ—Կարապետն ավերակ, Մուշն է լողում արյունում,

Արուսեթի իժ որդի Յուսուֆն եկել Բաղդադից
Մահ է ցանում, կյանք հնձում, վիշապի պես թունալից:

Հարյուր հազար ձիավոր, հարյուր հազար հետևակ
Պաշարեցին Բաթմանը՝ եկան հասան հուլթի տակ,

Հեյ ժողովուրդ, լուր տարեք, սարերից սար ձեն տվեք,
Չար գողմանը գալիս է կոտորելու ձեր տղերք...»

Արտապատառ գոռում էր, կանգնած դրռանը ժամի,
Մուշից հասնող բանրերը՝ վաթսունամյա ծերունի:

4.

Ինչպես սամուճն ամեհի, մրրկասույլ, հողմավաղ,
Ալեկոծե լռանիստ անապատի բարկ ավաղ,

Ու նեղոսի ջրերին իջնե թաթառն ահարկու
Երկինք արե մթազնեն, շաշեն հողմերը հուժկու,

Այսպես հանկարծ մթազնեց վառ հրազը Սասնա տան
Ու խալաբեց արևն իր՝ երբ լուրն առավ գուժական:

Սասնա սիրուն աղջկերանց հույսը հանգամ զարունքի,
Խշպէս կրին ջուր ածեն՝ փշուր դառնա ու հանգի...

Մի այրի հարա պինդ սեղմած կրծքին անխոս իր մանկան
Հաց էր լինում, որ չկա հույսի թեկուղ մի նշան:

Ու մի պառավ շաղ տալով ծամերըն իր սպիտակ
Վայ էր տալիս ու լալիս դանդակատան քիվի տակ:

«— Վա՛յ քեզ անբախտ Սասնա տուն,
Վա՛յ արևիդ, վա՛յ օրիդ.
Վա՛յ քո հողին ու ջրին,
Վա՛յ անառիկ սարերիդ,
Սև ամպ՝ շոքեց քո ճամբին
Սևնա՝ օրը Արաբի,
Վա՛յ քեզ Սասուն, վա՛յ բախտիդ,
Վա՛յ Սանասար քո պապին...»

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1.

Ո՛վ է իջնում Ծովասարի սեզ լանջերից հաղթական,
Ուսին պցել երկու հովաղ, ձեռքում՝ նիզակ զերթ մական:

Չայնում խրոխտ—է հե՛յ, լա՛ո, օ՛ր եք գտել խնճույքի,
Մենք որս անենք, դուք՝ հարսանիք, ձմռան ահեղ էք բուքին:

Այդ Հովնանի ձայնն է հնչում փոթորկի պես ահարկու
Ու սարերը ձեն են տալիս, արձագանքում մեկ մեկու

Իջնում է նա լեռներից վար, քսան կտրիճ հտեից,
Հողն է կքում ծանր ու հաստատ նրանց հուժկու քայլերից:

Գալիս է նա առջուծաբաշ, աչքերում հուր ու կայծակ,
Հյունն է հալչում, ժայռը փլչում իր հայացքից շանթաբձակ:

Գալիս է նա ու նրա հետ քսան քաջեր լեռնական,
Արամաղդի նման հուժկու, հաղթաբազուկ, առնական:

Գլխըներին երկար քոլոզ, մեջքից՝ գոտի ծոպավոր,
Շողշողում են գոտուն խրած զենքերն իրենց փառավոր:

Նրանց զինույց երկաթն ուժեղ սրտների պես աննկուն,
Քաջ Հովնանի մուրճն է կոփել հնոցի դեմ օրն ի բուն:

Սլանում են Սասնա քաջերն, մոտեցել են հավաքին,
Հովնանի գոռ ձայնն է թնդում, ամսրոսլի պես ահագին...

— Էհէ՛յ, էհէ՛յ, դե ձեն տվեք, ի՞նչ եք լուել քարի պես...
...Մի ծանր քար նստեց նրա սրտի դռան աղեկեղ:

2.

Ինչպես հանկարծ փուլ է գալիս հսկա մի լեռ բարձրասեղ
Ահեղ շարժի ցնցումներից որպես նաղյուս դյուրաբեկ,

Այդպես փլվեց խուլ շառաշով սիրտը հսկա Ռադմիկի,
Երբ նա կարգաց ծածուկ վիշտը աչքերի մեջ ամենքի:

Մի շարժումով որսը ուսից վար գլորեց, գցեց ցած,
Երկու հովազ լուռ փռվեցին ձյունի վրա խեղճացած:

(Արջան հետքից ձյունի վրա կաղապարվեց մի նկար,
Արջունագիր քարտեզի պես հայոց երկրի վշտահար...)

Հետո հանկարծ շուրջ աչքերն՝ թողած հանարն իր շինծու
Ու կանգնեց սեգ սարի նման, հաղթ հասակով Խուժեցու:

— Դե խոսեցե՛ք, էլ հերիք է, սիրտս հիմա կճաքի,
Ո՛վ սիրտ արավ ձեզ հասցնել այս սգավոր վիճակին...

Մինչ ամբոխը մնում էր լուռ՝ առաջ անցավ ծերունին
Որ բերել էր լուրն այդ դժխեմ, պատմեց մեկ-մեկ Հովնանին:

Թե անհավատ Յուսուֆն ի՞նչպես դորքն է կոխել Մուշ
քաղաք,
Կոտորում է մեծ ու պստիկ, քաղաքն անում ավերակ:

Թե Բազրատին—Մշո իշխան—շղթա զարկին ու տարան
Թագուհու հետ ու որդիերանց մինչև Բաղդադ, Սամարա:

Թե ռամիկներն առանց գլուխ, անտիրական հոտի պես
Բիրտ թշնամու ոտների տակ կոխան դառան խոտի պես:

Եվ ուրացող հայ իշխաններ կորստաբեր այդ ժամուն
Ոսկու զնով վաճառեցին իրենց հողին թշնամուն...

— Մա՛հ, ուրացող իշխաններին—գոռում էին ամբոխից,
Ոսկու համար ուզում են մեզ զրկե՛լ ջրից ու հողից:

Մա՛հ, անօրեն հալիֆային—արձագանքեց ամբոխն հոժ
Ու կատաղի առաջ շարժվեց՝ ինչպես մի ծով ալեկոծ...

2.

Դիտեց Հովնան ալիքը մեծ,
Որպես հմուտ նավավար,
Հետո հանգիստ այսպես խոսեց
Ռամիկ լեզվով, հայրաբար:

— Ի՛մ ժողովուրդ, ձեզ եմ ասում,
Ականջ արեք իմ խոսքին.
Քանի դեռ կան Խուժն ու Սասուն,
Քանի ողջ է իմ հողին,
Ոչ մի օտար սիրտ չի անի
Ոտքը դնել մեր հողին.
Ասածու կըրակ՝ մա՛հը տանի
Մեզ մեր հողից զրկողին:

Քանի՜ անգամ խալիֆայի
Զորքն է թափվել մեր երկիր,
Կամեցել է մատնել ահի
Բերդերը մեր քարուկիր:
Ավազի պես անթիվ ու շատ
Զորքը նրա ահարկու
Փշրվել է զարկից երկաթ
Հարվածներից մեր հուժկու:

Ի՞նչ եք՞ շվար դուք մտածում,
Թեկուզ հազար Ամիրա,
Թեկուզ հարյուր հազար Յուսուֆ
Զորքեր թափեն մեզ վրա՝
Անկարող են խել մի թիզ
Մեր սուրբ հողից հարազատ,
Հողը մե՛րն է, մեր պապական՝
Չկա՛ ժառանգ մեզնից զատ:

Շատ են փորձել՝ չեն հաջողել
Զավթել հողը Սասունի,
Մեր հողը զոր, դժար հող է,
Սանասարից մաս ունի:
Մեր պապերն են հիմքը դրել
Սասնա բերդին ու Մուշին,
Քրտինք թափել, քար են կրել,
Ո՞նց կթողնենք ուրիշին...

Ու՛մ կտրիճ է թող գա առաջ
ժամն է հասել սրբազան
Ում բազումը հաղթ է ու քաջ,
Ու՛մ սիրտ ունի անսասան
Սրտի նման Սանասարի՝
Թող դուրս քաշի հանց դաշույն,
Սրտով կովող լաճը արի
Իր պապերին է քաշում...

4.

Պայթեց հանկարծ մի փոթորիկ, մրրկաշունչ ու ահեղ,
Ծովն ամբոխի ալիք-ալիք կուտակվում էր խելահեղ:

Հարյուրավոր քաջ ռամիկներ մեկ մարդու պես անվարան
Առաջ անցան ու կանգնեցին Հովնանի դեմ-հանդիման:

Դաստակները ամուր սեղմած դաշույնների կեռ կոթին
Կանգնել էին խիզախ ու սեզ, Ծովասարի պես մթին:

— Երգվո՛ւմ ենք սուրբ Մարութիկով և քո կանաչ արևով,
Որ թշնամին չի բարձրանա մեր հայրենի սարերով:

Հարա՛մ լինի մեր մոր կաթը թե շղարկենք թշնամուն,
Չտանք փոշին նեմրութ սարից փշող սաստիկ սառ քամուն:

Հրամա՛ն տուր, Հովնան եղբայր, կռիվ երթանք Մշո դաշտ:
— Գոռում էին ամեն կողմից ռամիկները բազմավաշտ:

Առյուծազարմ հինգ հարյուր մարդ խառնվեցին քսանին,
Խոսքը Քաջի սրեց սրտերն՝ ինչպես քարը հեսանի:



Մութ երկնքում մի ամպ դուռաց, դղրդացին սար ու ձոր,
Լեռան գլխին շողաց մի շանթ թրի նման արնածոր:

Գիշերն իջավ թևատարած, սև շղարշով շարաշուք,
Ու փաթաթվեց Ծովասարի սառ ռոտներին անշշուկ...

ԳԼՈՒԽ ՎՅՅԵՐՈՐԴ

1.

Ձյունն էր թափվում փաթիլ-փաթիլ, գորշ երկնքից վայրահակ,
Ծածկում դաշտեր, հովիտ ու ձոր՝ փակում ճամբա ու ծմակ:

Սարի ճամբով բարձրանում էր խումբը ուրախ ու կայտառ,
Իջնում-եղնում ձոր ու կածան՝ հողում վրեժ բոցավառ:

Մեկ՝ ձյունապատ զառիվայրից թռչում էին դահավեժ,
Հարալ տալիս՝ պցում իրենց ահագնաթափ հանց ջրվեժ:

Մեկ՝ մազլցում քերձերն ի վեր, կտրում դաշտեր ու հովիտ,
Մեկ էլ մտնում խոր անտառներ՝ քնած մթում թանձրախիտ:

Մերթ կանգ առնում՝ տրկից խմում նռան գինին փրփրան,
Ուրախ պատմում խոսում էին, զրույց անում մի բերան:

Նորից մի պահ լռում էին, քայլում դրկած հուր ցատում.
Լուսթյան մեջ բուքը կարծես «վրեժ, վրեժ» էր ասում:

2.

Գիշերը մութ նստել էր պինդ, լեռների սառ քամակին,
Հեթիաթների յոթգլխանի հրեշի պես ահադին:

Չեր երեւում ոչ մի առու, ոչ մի գետակ ու կամուրջ,
Խաւարի տակ տնքում էին ժայռ ու կապան անշշունջ:

Ու սարերից մի դաժան բուք սողում էր վար՝ իջնում ցած,
Մտնում անտառ՝ կրծոտում էր ծառերի դին ոսկրացած:

Չիաների բաշերի մեջ դիզվել էին սառցասեղ,
Ժնգունքներից ծուխ էր փնչում, կրակ ժայթքում խելահեղ...

Տաք գոլորշին բարձրանում էր գավակներից քրտնաթոր,
Իտնում էր ջուր՝ փորի տակով վար էր թափվում ծորիծոր:

Ջորինների սմբակներից ձյունափարթամ դաշտերում
Հազար հեաքեր բացվում էին՝ նորից փակվում անդադրում...

3.

Հանկարծ ուժեղ մի սուր խրխինջ—ինչպէս ծնծղա
ռազմական,
Արծաղանքեց մութ գիշերում... Երթը կանգնեց ինքնակամ:

Յուլակի զիւ վրինջն հասավ իբրեւ ռազմի գոռ բամբեր,
Հասել էին մի նոր ավան, ուր մի նոր խումբ անհամբեր՝

Կազմ ու պատրաստ սպասում էր,—հարչուր հոգով քաջարի,
Միանալու Սասնա երկրի առյուծասիրտ քաջերին:

Սիփան սարից իջել նրանք, անցել էին լեռ ու ժայռ,
Որ շուտ հասնեն քաջ Հովնանի ռազմիկներին գինավառ:

— Լո-լո, յամա՛ն, դէ-լո-լո՛, հաստա՛տ սարը Սիփանա...
Գոռաց հանկարծ խումբը մեկեն՝ ինչպէս ելման ծով Վանա:

Հովնանն հազիվ էր նշմարել Գուրգենի գեմքն արքենի,
Երբ համբուրեց նրա ճակտից հայ իշխանը Արծրունի:

— Հովնա՛ն ...

— Գուրգե՛ն...

Ու լռեցին... Տաք արցունքի երկու կաթ
Վար սահեցին որպես նշան հուշի, սիրո խանդակաթ...

«Իշխանագուն մի հայ զարմիկ թողած պալատ, փառք ու
զանձ
Զեռք է մեկնել ուսմիկներին... հրա՛շք է սա, ով աստված...

Ու թե չկա բաժանող գիծ, ազատների, ուսմիկ մեջ,
Ինչո՞ւ հապա զուր հեղնեցին ուսմիկ մարդու սերն անշեջ...

Ու մի թախիծ իջավ մեկեն սրտի զրոտն Հովնանի,
Հիշեց անցած մի պատմություն իրա կյանքից պարմանի...

— Գինի՛, գինի՛ մեր տկերից—ձայնեց Գուրգեն իշխանը,
Առաջնորդի անգին կենաց, հավետ ապրի՛ Հովնանը...

Փոթորկալից գոչուններում դատարկեցին եղջյուրներ,
Նորից հեծան ձիերն իրենց ու քշեցին անվեհեր...

Այսպես ճամբին ամեն գյուղից, Դավիթորիկից, Բերդակից,
Նոր կտրիճներ հասնում էին, գառնում նրանց զինակից:

Մինչև Մոկունք խումբը դառավ հազար հոգուց մի ջոկատ,
Լուսադեմին վրա տալու, կովում ճակատ տու ճակատ...

ԳԼՈՒԿՈ ՅՈՒԹԵՐՈՐԳ

1.

Օրն էր ուրբաթ լուս ի շաբաթ, երբ որ հասան Մշո դաշտ,
Մթնշաղում չէր երևում սուրբ Փրկիչը բարեպաշտ,

Նրա գլխին խաչը արծաթ վեհափարթամ, երկնաձիգ,
Ջարգել էին բիրտ ոսոխներն՝ տեղը դրել մի մահիկ:

Յուսուֆը ժանտ դեռ քնում էր հայ իշխանի պալատում,
Բազրատունու անկողնու մեջ՝ ոսկեճամուկ խալաթում:

Նրա մահճի ոտքերի տակ երկու աղջիկ սեահեր,
Մատաղոտի երկու գերի, բռնաբարված երկու սեր,

Ամբողջ գիշեր պարել էին «ծամթել» պարը նազելի,
Արյունարբու ոստիկանի աչքերի դեմ լրբենի...

...երկու կույսերն հիմա նստել,—նման կոտորած հայելու,
Ամոթանքից խպնում էին իրար երես նայելու...

Չիմանալով թե քանի կույս իրենց նման գեղանի,
Մի գիշերում փշուր դառան գավի նման սեղանի:

Քանի՜ մայրեր խողխողվեցին, քանի՜ հարսներ մահացան,
Քանի՜ մատաղ երեխաներ, քանի՜ աղջիկ գեղածամ:

Քանի՜ իշխան գերի տարան, քանի՜ ռամիկ կամ աղատ,
Ջրկվեցին իրենց տնից, հողից, ջրից հարազատ:

Խարույկների բոցերի մեջ քանի՜ պառավ այրեցին,
Քանի՜ մարդկանց զիշատեցին, որպես ուրուր, որպես ցին...

2.

Յուսուֆը ժանտ դեռ քնում էր հայ իշխանի պալատում,
Բազրատունու անկողնու մեջ՝ ոսկեճամուկ խալաթում...

Կավեց հանկարծ փողերի ձայն, թամբուրների մի գզորդ,
Ներս վազեցին երկու պահակ, երկու խափշիկ սեամորթ:

— «Էմբրն հզոր հաստա՛տ մնա, խռովեցինք մրակն իր,
Բայց թշնամին պաշարել է բանակը մեր այրընտիր:

Ասում են ողջ խոթեցիր են, ըմբոստներ են լեռնական,
Ի՛նչ է արդյոք հրամանը զորապետի հաղթական...»

Յուսուֆն հագիւլ լուրը լսեց՝ գուրս խոյացաւ իր տեղից,
Նստեց նժուշգն արաբական, զորքը քաշեց ետեից:

Փռշու միջից թռչում էին ճամբաներով անորոշ,
Առջևիցը ծածանվում էր կանաչագույն մի գրոշ...

Ու կատաղի գոռուգոռով կրկնում էին միալար,
— «Ալլահ, ալլահ, յա՛ խփտա, Մահումեդ, բեսուլ ալլահ...»

3.

Կռիվն արդեն սկսվել էր քաղթի ամեն մի մասում
Ու վրեժի կրակը թեժ իր արդար խոտքն էր ասում:

Առջուծասիրա հայ մեկնազենք աշտենները ձեռներին
Վրեժ գոռում թռչում էին չար թշնամու դիրքերին:

Ու նժուշգներ քառասմբակ դոփում էին անհանգիստ,
Փրփուր թրում վազում էին դաշտերի մեջ լայնանիստ:

Հագար նիզակ փաշլում էին, թրեր շողում երկնայրի,
Անարգ ու նենդ թշնամու դեմ՝ խուժած երկրից Հագարի:

Հովնանն ահեղ՝ քսան հոգով արշավում էր առաջից,
Խրով խփում ջարդոտում էր նա մեկ ձախից՝ մեկ աջից:

Նրա աակին Ցուլակը խուլ խրխնջալով սլանում,
Ու զենքերի շաշտմաներից երկինք—գետինք խլանում...

Չորս ժամ անցալ մահասարսուռ, չորս ժամ՝ հանց մի
 ակնթարթ,
 Իիզկել էին արաբների դիակները բարդ ի բարդ:

Ահաբեկչալ զորքը ոսոխ կոտորվում էր անխնա,
 Կոտորվում էր ճզի նման՝ դիմադրելու անհնար:

Յուսուֆը նենգ, վախից կապտած, փախալ մտալ սրտադող
 Քաղաքի մեծ եկեղեցին—աստուծո տունն ապահով:

Մտածելով, որ խութեցիք քրիստոնյա, բարեպաշտ,
 Աստծու տունը չեն դարձրնի վրեժի վայր, արյան դաշտ:

Բայց զորքն հայոց վրեժխնդիր, լսեց նրա նենգ փախուստ,
 Աւ պաշարեց եկեղեցու չորս բոլորը արտաքուստ:

Հետո մի խումբ մեկնազեններ խորտակեցին դռնն ամուր,
 Քամու նման ներս խուժեցին ու փնտռեցին ամենուր:

Արշունարբու ոսոխն արագ բարձրացել էր մինչ գմբեթ,
 Աւ կծկվել մի անկյունում... որպես վերջին հենակետ:

Գմբեթումն էլ ձեռք ձգեցին պիղծ դահիճին մարդասպան,
 Որ փորձել էր վերջին ժամին խաչը ընտրել ապաստան:

Մի խութեցի թուրը քաշեց՝ նրա գանգը թոցնի,
 Երբ որ հանկարծ հնչեց ահեղ ձայնը կտրիճ Հովնանի:

— Չհանդգնե՛ս, հա՛յ մեկնազեն, թուրդ կոխիր պատյանը,
 Նրա դատը պետք է վճռի ժողովրդի առյանը:

Ողջ-ողջ բռնել ու վար բերել, թող դեռ ապրի մի վայրկյան,
վայրկյանն ի՞նչ է, որ խնայենք ոստիկանին «պատվական»:

Կապոտեցին պարաններով ձեռն ու ոտը գազանի,
Ու բերեցին թավալ տվին ոտների տակ Հովնանի:

— Հավաքեցե՛ք ժողովրդին... ձայնեց Հովնանը ահեղ,
Բազմության մեջ ընկավ մեկեն խուճապ, ժխոր խելահեղ:

Աղմուկի մեջ երկու աղջիկ առաջ անցան տխրադեմ,
Ու կանգնեցին սրտատրուփ՝ քաջ Հովնանին դեմ ու դեմ:

Կույսերն էին նրանք երկու, բռնաբարված ու գերի,
Զոհերն անմեղ՝ ժանտ Յուսուֆի շնաբարո կրքերի:

Բազմությունը լոեց հանկարծ, տիրեց երկար մի վայրկյան,
Հովնանի դուռ ձայնը հնչեց որպես սպառզամ տիրական:

5.

— Խոսի՛ր, Յուսուֆ, դու որ բազում պատերազմներ ես
վարել,
Հայք, Պաղեստին ու Վրաստան ոտներիդ տակն ես առել:

Մարդը ինչո՞ւ է տարբերվում մի այլ մարդուց հողածին,
Որի արևն ես խավարում, ջուրը կտրում ջաղացի:

Ասենք զորքի, ուժի տեր ես, աշխարհներ ես գրավում
Նվաճել ես դու շատ հողեր Արևելքում, Հարավում:

Բայց ի՞նչ սրտով կոտորում ես հպատակիդ պարտըված,
Կերի վարում անզեններին, վաճառում ես դու նրանց:

Ի՞նչ օրենքով շինականի հացն ես խլում ու տանում,
Արդա՞ր բան է քաղցած մնալ հայրենական իր տնում:

Ի՞նչ օրենքով ջահել կանանց ու կույսերին անհամար,
Բանտարկել ես քո հարեմում, հարճ ես պահել քեզ համար:

Ի՞նչ օրենքով ժողովրդին դարձրել ես տարագիր,
Հողը խլել՝ քարշ ես տվել անապատներն Իրաքի...

Ո՞ւր է Բագրատ իշխանը մեր, Մշո տերը ալեզարդ,
Ի՞նչ օրենքով դու գողացար նրա գահըն ու գեղարդ:

Ո՞ւր են արծաթ սպասները Մշո մեր սուրբ տաճարի,
Ո՞ւր են գրքերն մագաղաթյա, ո՞ւր դպիրներն քաջարի...

Պատասխանի՛ր, քե՛զ եմ ասում... Չէ՛ որ քաջ ես ու զինվոր,
Պատասխանի՛դ է սպասում ժողովուրդն իմ դատավոր...

Յուսուֆը լուռ ու մթամած քարացել էր, չէր խոսում,
Ինչպես կողպած մզկիթը մութ Մեդինեի դարպասում...



Քաջ Խութեցու աչքերի մեջ զույգ կայծակներ շողացին,
Խոր հուզմունքից ու ցասումից ձեռն ու ոտը դողացին:

Հետո դարձավ ժողովրդին, մարգարեի պես խոհուն,
Ջուպլ ու հանդարտ այսպես խոսեց դատավորը իմաստուն:

— Ծանրը ցավին չի դիմանա ոչ մի կշեռք ու նժար,
Ո՞վ ժողովուրդ, ձեզ եմ թողնում, այս դազանի դատն արդար:

Ձեզ եմ թողնում հայ աղջիկներ, ձեզ եմ թողնում հայ
մայրեր,

Բոլոր կանանց՝ ում սրտերը կրակներումն է այրվել...

Բազմութիւնը իրար անցաւ, ասեա պայթեց մի որոտ,
Ու ամբոխից մոլեգնաբար վրա տովին զայրացկոտ:

— Թոքը հանել, տալ շներին—գոռում էին ամբոխից,
Ղը իմանա, ի՞նչ է ցաւը, ի՞նչ են արցունք ու կսկիծ:

— Յի՛ցը հանել, կախ տալ շանը—բղավում էր մի ուսմիկ,
Որ իմանա ի՞նչ ասել է քանդել տուն տեղ, ընտանիք...

Քսան քաջերն իրենց պետի դեմ կանգնեցին որպէս հարց,
Պետ ու զինվոր հայացքներով լուռ խոսեցին փոխադարձ...

Հետո նրանք դահճին տարան ու կախ տովին գմբեթում,
Կատարվել էր ժողովրդի իշծը արդար, անպատում:

6.

Այսպէս անցաւ արշունարբուն՝ Յուուֆ բնը Աբուսեթ,
Նա որ սփռեց հայոց երկրում բյուր տառապանք ու աղետ:

Երկու գիշեր, մինչ կիրակի, մնաց դիակն օդում կախ,
Որպէս խրատ ոսոխների, մարդկանց դաժան ու խարդախ:

Մուշ քաղաքը նորից ցնծաց, բյուր ուսմիկներ բաղմահոծ,
Երգում էին ու կաքավում, շրջում փողոց առ փողոց...

7.

Յոթը գույնով կամար կապեց երկնում մի վառ ծիածան,
Փողոցներով շարան-շարան զորքն էր անցնում հայկական:

Հովնանն հեծած իր Յուակ-ձին բռնել էր պինդ նրա սանձ,
Արևաբաշ ձին վրնջում՝ վիզն էր ցցել սիգապանծ:

Նրա կողքին Գուրգեն իշխանն հեծած նժույզն իր աշխետ,
Սրտագործով ու մտերիմ զրուցում էր Պետի հետ:

Հետո հերթով գալիս էին աշտեավոր մեկնազենք,
Նրանց ետև փալլում էին հետևակաց հազար տեղ:

Այսպես խրոխտ անցնում էին կտրիճները ռազմաքայլ,
Հոնշալով թավալվում էր ավարաբարձ քսան սայլ:

Սայլերի մեջ խոռնափնթոր թափվել էին գուրզ ու թուր:
Սրաքական արծաթակոթ կեռ խանչալներ սայրանուր:

Հնչում էին դուռ շեփորներ, դափ ու զուռնա ու սրինգ,
Ու ամբոխի զոչյուններից զղրդում էր ողջ երկինք...

ՎԵՐԱԵՐԳ

Մի ալեհեր հայ վարդապետ, իմաստասեր ծեր դպիր,
Հենց որ տեսավ սատակումը ոստիկանին այն ժպիւրհ,

Մտավ խուցն իր խոնավ ու ցուրտ վառեց կանթեղն իր աղոտ,
Ծունկի եկավ ու ողբաձայն սաղմոսերգեց մի աղոթք...

— «Հայցեմ ի քեն ամենակալ, տեր գթառատ ու բարի,
Շնորհյա ընդ փուլթ ազատություն վասպուրական աշխարհի:

Շնորհյա ընդ փուլթ ազատություն, եղբարց մերոց դերելոց,
Հայցեմ ի քեն ամենակալ, տեր գթառատ ու բարի...»

Աղոթում էր ու աչքերից տաք արցունքներ հորդառատ,
Խորշումների ակոսներով թափվում էին անընդհատ...

Մեղմիկ սրբեց արտասուքն իր թեղանիքով խոնացած
Դանդաղ դիմեց իր սեղանին խոկումներով լուսամած:

Բացավ մի ծալք մագաղաթի, վերցրեց փետուրն ու թանաք,
իւ մատներով իր մեղրամոմ՝ գրեց մի նոր հանգանակ:

Գրեց երկա՛ր, մինչ ուշ գիշեր, մինչ վաղորդյան արշալույս,
Թվեց մեկ-մեկ հայոց ազգի կոտորածներն սրտահուլ:

Պատմեց ռամկի սերն հայրենի և իշխանաց բյուր դավեր,
Պատմեց Մշո հերոսամարտն, որ չմնա անվավեր...

Որ գա հասնի սերունդներին անունը քաջ Հերոսի,
Նրա կներում մեր թոռների դառնա արյունն ու հոսի...:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք

1. Աղանդներում	5
--------------------------	---

Հայրենական զեղոններ

2. Տաղ՝ նվիրված հայրենիքին	6
3. I	10
4. II	11
5. Հրազդան	12
6. Արևազալ	13
7. Նավասարդյան	15
8. Պատանհը	17
9. Հ.9 նոյեմբերի Այդարացը	19

Խազմի օրերին

10. Առաջին գիշերը	20
11. Նամակ	22
12. Պատասխան	24
13. Սպասում	26
14. Մայրական կարոտ	27
15. Հարառություն	28
16. Հաղթանակի օրը	29

Լույս Զվարթ

17. Գարուն	30
18. Այդարաց	31
19. Դեղձի կռթք (Էրդ)	33
20. Խաղողի այգին	35
21. Հայրենի աշուն	37
22. Երևանի պող ջուր	38

Օտար երկնի տակ

23. Կրկնառեկիլ	39
24. Բալլադ՝ մի խաղողի վաղի մասին	41
25. Մի կախիլ արշուն	46
26. Նամակ տարագիր բարեկ. մից	47
27. Շողենո վը	48

29	Գնում եւ մայր Հայաստան	.	.	.	.	.	.	.	49
30.	Մեր տունը	.	.	.	.	.	.	.	50
Զահակիքները									
31.	Մերոսդ	.	.	.	.	.	.	.	51
32.	Երազ	.	.	.	.	.	.	.	53
33.	Դանիել Վարուժան	.	.	.	.	.	.	.	55
34	Կոմիտաս	.	.	.	.	.	.	.	56
35.	Հ. Թ.	.	.	.	.	.	.	.	77
36.	Ա. Ի.	.	.	.	.	.	.	.	58
37	Ֆրդուսի	.	.	.	.	.	.	.	59
38.	Շիրվանզադե	.	.	.	.	.	.	.	60
	* *	.	.	.	.	.	.	.	61
Գուսանական									
39.	Իմ սիրական	.	.	.	.	.	.	.	62
40.	Վերջին դադելը Սայաթի	.	.	.	.	.	.	.	63
Թարգմանություններ									
41.	Զամշիդ (Ֆրդուսուդ)	.	.	.	.	.	.	.	67
42.	Դերվիշը (Վ. Հյուզսի)	.	.	.	.	.	.	.	73
43.	Խուրեցի Հովնան (սլաւոնահայտական սյոն)	.	.	.	.	.	.	.	75

ՎՖ 12683: Պատվեր 581: Տիրած 3000: Տպագր. 2 7 1/2 մամ.
Հեղ. 5,2 մամուլ: Ստորագրված է տպագրության 25/XII 1946 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգր. և Հրատ. Վարչ.
№ 3 տպարան, տպահրդյան № 65 երևան, 1946 թ.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. գրադ.



220028244

ԳԻՆԸ 10 Ա

